


ԶՐՈՒՅՑ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՒ ՏԻՐԱԿԱԼԻ  
ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

ԿԱՐԼ ՇՄԻԹ

ՀՏԳ 321



**ԶՐՈՒՅՑ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՒ  
ՏԻՐԱԿԱԼԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ  
ՇՈՒՐՋ**

**ԿԱՐԼ ՇՄԻԹ**

Երևան  
«Ինլայթ» հանրային հետազոտությունների կենտրոն ՀԿ  
2020

ԳՄԴ 66.0+87  
Շ 721

Թարգմանությունը՝ Մերի Բաբայանի  
Խմբագրությունը՝ Գայանե Խաչատրյանի  
Գրաֆիկական ձևավորումը՝ Լիլիթ Խաչատրյանի  
Սրբագրությունը՝ Նունե Մաթևոսյանի

Շմիթ Կարլ

Շ 721 Ձրույց իշխանության և տիրակալի հասանելիության շուրջ/ Կարլ  
Շմիթ.- Եր.:

«Ինլայթ» հանրային հետազոտությունների կենտրոն հասարակական  
կազմակերպություն, Երևան, 2020 - 52 էջ:

«Ինլայթը» ներկայացնում է XX դարի նշանավոր գերմանացի քաղաքական  
տեսաբան, իրավագետ, փիլիսոփա Կարլ Շմիթի «Ձրույց իշխանության և  
տիրակալի հասանելիության շուրջ» ռադիոէսսեի՝ ռուսերենից հայերեն  
թարգմանությունը: Հրատարակչության մեջ ներառված են նաև Կարլ  
Շմիթի և Էռնստ Յունգերի նամակագրության որոշ նմուշներ, ինչպես նաև  
հրատարակիչ Գերդ Գիսլերի վերջաբանը:

ՀՏԴ 321:1/14  
ԳՄԴ 66.0+87

ISBN 978-9939-1-1103

© Մերի Բաբայան՝ ռուսերենից հայերեն թարգմանություն, 2020  
© «Ինլայթ» հանրային հետազոտությունների կենտրոն ՀԿ, 2020

## Ձրույց իշխանության և տիրակալի հասանելիության շուրջ

Հրատարակիչ Գերդ Գիսլերի վերջաբանով  
Կարլ Շմիթ

*Klett-Cotta հրատարակչություն, 2-րդ հրատարակություն, 2012*

Գիրքը նույն վերնագրով առաջին անգամ հրատարակվել է 1954 թվականին «Opuscula» շարքում, Գյունտեր Նեսկեի հրատարակչությունում (Պֆուլլինգեն):

Թարգմանությունը գերմաներենից ռուսերեն՝ Վիտալի Կրուկովի:

Թարգմանությունը ռուսերենից հայերեն՝ Մերի Բաբայանի:

### Հրատարակչության կողմից

**«Մի խոսքով՝ ես կարծում եմ, որ պետք է  
վերընթերցել Շմիթին, ինչպես և Հայդեգերին»:**

*Ժակ Դերիդա*

1954 թվականին՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից ինը տարի անց, Կարլ Շմիթը գրեց ռադիոէսսե, որը բազմիցս վերահրատարակվել է «Ձրույց իշխանության և տիրակալի հասանելիության շուրջ» անվանմամբ: Այս «Ձրույցը» մինչ օրս Կարլ Շմիթի ամենաազդեցիկ գործերի շարքին է դասվում:

Տեքստը, որը գրված է փայլուն լակոնիկ ոճով, հորինված գրույցի տեսքով է կառուցված: Նրա թեման ժամանակակից իշխանությունն է՝ վարչական միջոցների և մեթոդների պայմանների տեսանկյունից: Շմիթն իշխանությունը սահմանում էր որպես «սոցիալական միահյուսվածք» և «ինքնուրույն մեծություն»:

Յուրաքանչյուր տիրակալ, ըստ Կարլ Շմիթի, ստիպված է հիմնվել «գեկույցների և տեղեկատվության վրա և կախված է իր խորհրդատուներից: Օրեցօր և ժամ առ ժամ նրա վրա բարդվում են բազմաթիվ փաստեր և հաղորդագրություններ,

առաջարկություններ և ենթադրություններ: Ճշմարտության և ստի, իրականության և հավանականության այս անվերջ փոթորկվող ծովից նույնիսկ ամենախելացի և ամենահզոր մարդը առավելագույնը մի քանի կաթիլ կարող է վերցնել»:

Շմիթի մտածողությունը պտտվում էր իշխանության, ուժի և օրենքի կիրառման հարցերի շուրջ: Նրա լայնածավալ ստեղծագործական կյանքի վրա լուրջ ազդեցություն են թողել պետության և իրավունքի հարցերով զբաղվող քաղաքական այնպիսի փիլիսոփաներ և մտածողներ, ինչպիսիք են Հոբսը, Մակիավելլին, Ռուսոն, Դոնոսո Կորտեսը, Սորելը և Պարետոն: «Զրույցը» Շմիթի գործերի մեջ նշանավոր դիրք է զբաղեցնում շնորհիվ իր շարունակական ազդեցության:

Հեղինակի մասին. Կարլ Շմիթը (1888-1985) գերմանացի ամենաազդեցիկ իրավաբաններից մեկն էր, XX դարի պետական և միջազգային իրավունքի գիտակ և քաղաքական փիլիսոփա:

## Կարլ Շմիթ

Չրոյց իշխանության և տիրակալի  
հասանելիության շուրջ

**Դուք երջանիկ եք:  
Մենք զորեղ ենք:**

Լորդ Բայրոն

### Չրոյցի մասնակիցներ՝

**Ե.** (Երիտասարդ, ով հարցեր է տալիս)

**Կ.Շ.** (Կարլ Շմիթ, հեղինակ, պատասխանող)

Ինտերմեցցոն կարող է կարդալ երրորդ անձը:

**Ե.** Մինչ Դուք կսկսեք խոսել իշխանության մասին, ես պետք է մի բան հարցնեմ Ձեզ:

**Կ.Շ.** Խնդրեմ, պարո՞ն Ե:

**Ե.** Դուք ինքներդ ունե՞ք որևէ իշխանություն, թե՞ իշխանություն չունեք:

**Կ.Շ.** Այդ հարցը լիովին արդարացված է: Նա, ով խոսում է իշխանության մասին, նախ պետք է ասի, թե ինքն ինչ դիրք ունի իշխանության նկատմամբ:

**Ե.** Ուրեմն Դուք ունե՞ք իշխանություն, թե՞ ոչ:

**Կ.Շ.** Ես իշխանություն չունեմ: Ես պատկանում եմ այն մարդկանց թվին, որոնք չունեն իշխանություն:

**Ե.** Դա կասկածելի է:

**Կ.Շ.** Ինչու՞:

**Ե.** Որովհետև այդ դեպքում Դուք, հավանաբար, իշխանութ-

յան նկատմամբ կանխակալություն ունեք: Չարությունը, դաժանությունը, վիրավորանքը սխալների սովորական աղբյուր են:

**Կ.Շ.** Դե, իսկ եթե ես պատկանեմ իշխողներին:

**Ե.** Այդ դեպքում Դուք, հավանաբար, կանխակարծություն կունենայիք հոգուտ իշխանության: Սեփական ուժի և դրա հաստատման նկատմամբ հետաքրքրությունը, իհարկե, ևս սխալների աղբյուր է:

**Կ.Շ.** Բայց այդ դեպքում ղվ ընդհանրապես իրավունք ունի խոսելու իշխանության մասին:

**Ե.** Դա Դուք պետք է ինձ ասեիք:

**Կ.Շ.** Ես կասեի՝ հավանաբար կա մեկ այլ՝ անշահախնդիր դիտարկման և նկարագրության դիրքորոշում:

**Ե.** Այդ դեպքում, գուցե, դա երրորդ անձի կամ ազատորեն ձախրող ինտելեկտի դերը լիներ:

**Կ.Շ.** Ինտելեկտ այստեղ, ինտելեկտ այնտեղ: Եկեք միանգամից նման ընդհանրացված գնահատականներով չսկսենք: Նախ փորձենք ձիշտ տեսնել այն պատմական երևույթը, որը մենք բոլորս վերապրում և որին դիմանում ենք: Արդյունքը տեսանելի կլինի:

**Ե.** Այսպիսով՝ մենք խոսում ենք իշխանության մասին, որը որոշ մարդիկ իրականացնում են այլ մարդկանց նկատմամբ: Որտեղից է, ըստ էության, ծագում այն հրեշավոր իշխանությունը, որը, ասենք, Ստալինը կամ Ռուզվելտը կամ մեկ ուրիշը, ում կարող էինք այստեղ դասել, ունեին միլիոնավոր այլ մարդկանց նկատմամբ:

**Կ.Շ.** Ավելի վաղ ժամանակներում այսպիսի պատասխան կտային. իշխանությունը բխում է կամ բնությունից, կամ Աստծուց:

**Ե.** Վախենամ, որ այսօր իշխանությունն այլևս մեզ բնական չի թվում:

**Կ. Շ.** Ես ևս վախենում եմ դրանից: Այսօր մենք մեր չափազանց մեծ գերակայությունն ենք զգում բնության նկատմամբ: Մենք այլևս չենք վախենում նրանից: Եթե նա մեզ համար տհաճ է դառնում, ինչպես հիվանդությունը կամ տարերային աղետը, մենք հույս ենք հայտնում, որ շուտով կհաղթենք նրան: Մարդը՝ ի բնե թույլ կենդանի էակ, տեխնիկայի օգնությամբ չափից շատ է բարձրացել իր շրջակա միջավայրի նկատմամբ: Նա դարձրել է իրեն բնության և երկրային բոլոր կենդանի էակների թագավորը: Խոչընդոտները, որոնցով բնությունը ավելի վաղ ժամանակներում զգալիորեն սահմանափակում էր նրան, ցուրտը և տապը, սովը և զրկանքները, վայրի կենդանիները և բոլոր տեսակի վտանգները. այս բնական սահմանափակումներն ականհայտորեն նահանջում են:

**Ե.** Դա ճիշտ է: Այլևս կարիք չկա վախենալու վայրի կենդանիներից:

**Կ.Շ.** Հերկուլեսի սխրանքները մեզ մեր օրերում բավականին համեստ են թվում, և եթե այսօր առյուծը կամ գայլը հայտնվեն ժամանակակից մեծ քաղաքում, ապա նրանք առավելագույնը փողոցային երթևեկի խոչընդոտ կդառնան, բայց դժվար թե վախեցնեն նույնիսկ երեխային: Այսօր մարդը բնության հանդեպ այնպիսի գերակայություն է զգում, որ նույնիսկ թույլ է տալիս իրեն բնապահպանական արգելոցներ ստեղծել:

**Ե.** Իսկ ի՞նչ կասեք Աստծո մասին:

**Կ.Շ.** Ինչ վերաբերում է Աստծուն, ապա ժամանակակից մարդը, ես նկատի ունեմ մեծ քաղաքի տիպիկ բնակչին, նույնպես այնպիսի զգացում ունի, որ Աստված նահանջում է կամ հեռացել է մեզնից: Եթե այսօր խոսակցության մեջ հիշատակում են Աստծուն, ապա «նորմալ կրթված մարդը» ինքնաբերաբար մեջբերում է Նիցշեի կարծիքը՝ Աստված մեռած է: Մյուսները առավել լավ տեղեկացվածները, մեջբերում են ֆրանսիացի սոցիալիստ Պրուդոնի արտահայտությունը, որը մոտ քառասուն տարով առաջ է ընկել Նիցշեի դատավճռից և պնդում է. «Նա, ով խոսում է Աստծո մասին, ցանկանում է խաբել»:



**Ե.** Իսկ եթե իշխանությունը չի բխում ո՛չ բնությունից, ո՛չ էլ Աստծուց, ապա որտեղի՞ց է այն սկիզբ առնում:

**Կ.Շ.** Այդ դեպքում, թերևս, միայն մեկ բան է մնում. իշխանությունը, որը մեկ անձն իրականացնում է մյուսների նկատմամբ, բխում է հենց այդ անձանցից:

**Ե.** Լավ, թող այդպես լինի: Բայց մենք բոլորս մարդիկ ենք: Ստալինը նույնպես մարդ էր, և Ռուզվելտն էլ էր մարդ, և ցանկացած մեկ ուրիշը, նշե՛ք՝ ում ուզում եք:

**Կ.Շ.** Դա իսկապես հանգստացնող է թվում: Եթե իշխանությունը, որը մեկ անձն իրականացնում է մյուսի նկատմամբ, բխում է բնությունից, ապա դա կամ ծնողի իշխանությունն է իր սերնդի նկատմամբ, կամ ատամների, եղջյուրների, ձիթանների, թունավոր խցուկների և բնական այլ զենքերի գերակայությունը: Ծնողի իշխանությունն իր սերնդի նկատմամբ, երևի թե, կարող ենք այստեղ հաշվի չառնել: Մնում է գայլի տիրակալությունը գառան վրա: Իշխանություն ունեցող մարդը նման կլիներ գայլի այն մարդու համեմատ, ով այդ իշխանությունը չունի: Նա, ով իշխանություն չունի, իրեն գառ է զգում մինչ այն պահը, երբ իր հերթին չի հասնում մի դիրքի, որում իշխանություն է ձեռք բերում և ինքը ստանձնում գայլի դերը: Հենց այդ է բարբառում լատինական ասացվածքը՝ *Homo homini lupus est*: Թարգմանաբար՝ Մարդը մարդուն գայլ է:

**Ե.** Սարսափելի է: Իսկ եթե իշխանությունը գալիս է Աստծու՞ց:

**Կ.Շ.** Ապա նա, ով իշխանությամբ է օժտված, աստվածային որակի կրող է: Իր իշխանությամբ ինքն իր վրա է վերցնում աստվածային ինչ-որ բան, և, հետևաբար, անհրաժեշտ է պատվել եթե նույնիսկ ոչ իրեն, ապա նրանում դրսևորվող Աստծո իշխանությունը: Այդ մասին վկայում է լատինական մեկ այլ արտահայտություն՝ *Homo homini Deus*: Սա նշանակում է՝ Մարդը մարդուն Աստված է:

**Ե.** Դա արդեն շատ հեռուն է գնում:

**Կ.Շ.** Բայց եթե իշխանությունը չի բխում ո՛չ բնությունից, ո՛չ Աստծուց, ապա իշխանությանը և դրա կատարմանը

վերաբերող ամեն ինչ տեղի է ունենում միայն մարդկանց միջև: Այդ դեպքում մենք՝ մարդիկ, ամբողջովին միայն մեր՝ մարդկանց միջև ենք: Իշխանավորներն իշխանազուրկների նկատմամբ, զորեղները տկարների նկատմամբ. դրանք պարզապես մարդիկ են մարդկանց նկատմամբ:

**Ե.** Այդ դեպքում այսպես ասենք՝ Մարդը մարդուն մարդ է:

**Կ.Շ.** Այդպես է ասում լատինական մեկ այլ ասացվածք՝ Homo homini homo:

**Ե.** Պարզ է: Մարդը մարդուն մարդ է: Միայն այն պատճառով, որ կան մարդիկ, ովքեր հնազանդվում են մեկ այլ մարդու, վերջինիս իշխանություն են տալիս: Եթե նրանք դադարում են հնազանդվել նրան, ապա նրա իշխանությունը ևս ինքնին դադարում է:

**Կ.Շ.** Բոլորովին ճիշտ է: Բայց ինչու՞ են նրանք հնազանդվում: Չէ՞ որ հնազանդությունը կամայական չէ, այլ ինչ-որ բանով մոտիվացված: Ինչու՞ են մարդիկ, այնուամենայնիվ, իրենց համաձայնությունը տալիս իշխանությանը: Որոշ դեպքերում վստահությունից ելնելով, որոշ դեպքերում՝ վախից, երբեմն՝ հույսից, երբեմն էլ՝ հուսահատությունից: Բայց նրանք միշտ պաշտպանության կարիք են զգում, և այդ պաշտպանությունը փնտրում են իշխանության մոտ: Մարդու տեսանկյունից պաշտպանության և հնազանդության միջև կապը մնում է իշխանության միակ բացատրությունը: Նա, ով չունի ինչ-որ մեկին պաշտպանելու ուժ, իրավունք չունի վերջինից հնազանդություն պահանջելու: Եվ հակառակը՝ նա, ով փնտրում է պաշտպանություն և ստանում է այն, իրավունք չունի հրաժարվելու իր պաշտպանին հնազանդվելուց:

**Ե.** Բայց եթե իշխողն ինչ-որ անօրինական բան է հրամայում: Այդ դեպքում հարկավոր է հրաժարվել նրան հնազանդվելուց:

**Կ.Շ.** Անշուշտ: Բայց ես խոսում եմ ոչ թե առանձին հակաօրինական հրամանների մասին, այլ այն ընդհանուր իրավիճակի, որում իշխողներն ու իշխանության ենթակաները միավորված են քաղաքական միասնությամբ: Եվ իրադրությունն այստեղ այնպիսին է, որ նա, ով իշխա-

նություն ունի, կարող է անընդհատ ստեղծել գործուն և հնազանդության համար ամենևին ոչ միշտ անբարոյական դրդապատճառներ՝ գոյության պաշտպանության և անվլտանգության ապահովման, դաստիարակության և այլոց նկատմամբ սոլիդար շահերի ճանապարհով: Մի խոսքով՝ համաձայնությունը (կոնսենսուս) առաջացնում է իշխանություն, սա ձիշտ է, բայց իշխանությունը նույնպես առաջացնում է համաձայնություն, և ամենևին ոչ բոլոր դեպքերում է այդ համաձայնությունն անխոհեմ կամ անբարոյական:

**Ե.** Ինչ եք ուզում դրանով ասել:

**Կ.Շ.** Ես ուզում եմ ասել, որ նույնիսկ այնտեղ, որտեղ իշխանությունն իրականացվում է բոլոր ենթակաների լիարժեք համաձայնությամբ, այն, այնուամենայնիվ, ունի իր որոշակի սեփական նշանակությունը, իր, այսպես ասած, ավելցուկային արժեքը: Նա ավելին է, քան ստացած բոլոր համաձայնությունների հանրագումարը, ինչպես նաև ավելին, քան դրանց արտադրանքը: Պարզապես մտորեք, թե որքան ուժգին է անհատ մարդն այսօրվա՝ աշխատանքի բաշխման վրա հիմնված հասարակության պայմաններում ներգրավված հասարակական համատեքստում: Մենք հենց նոր խոսում էինք, որ բնության սահմանափակումները նահանջում են, բայց դրա փոխարեն մարդու վրա ավելի ու ավելի ուժեղ են ճնշում սոցիալական սահմանները: Դրա հետևանքով ուժգնանում է նաև իշխանությանը համաձայն լինելու մոտիվացիան: Ժամանակակից տիրակալն ունի անսահման մեծ քանակությամբ միջոցներ, որպեսզի կարողանա համաձայնություն ձեռք բերել իր իշխանության նկատմամբ, ավելի, քան դրանք ունեին Կառլոս Մեծը կամ Ֆրեդերիկ Շիկամորուսը:

**Ե.** Դրանով ուզում եք ասել, որ տիրակալն այսօր կարող է անել՝ ինչ ցանկանա՞:

**Կ.Շ.** Ընդհակառակը: Ես պարզապես ուզում եմ ասել, որ իշխանությունը սեփական անկախ մեծություն է իրեն ստեղծած համաձայնության նկատմամբ, և այժմ ես կցանկանայի ցույց տալ Ձեզ, որ այն անկախ մեծություն է նաև իշխողի նկատմամբ: Իշխանությունը օբյեկտիվ, սեփական

կանոններով զարգացող մեծություն է յուրաքանչյուր անհատի նկատմամբ, որի ձեռքերում յուրաքանչյուր կոնկրետ դեպքում կա իշխանություն:

**Ե.** Ինչ է նշանակում այստեղ «օբյեկտիվ, սեփական կանոններով զարգացող մեծություն»:

**Կ.Շ.** Դա նշանակում է ինչ-որ շատ կոնկրետ բան: Հասկացե՞ք, որ նույնիսկ ամենասարսափելի տիրակալը մնում է սահմանափակված մարդու ֆիզիկական բնույթով, մարդկային մտքի անբավարարությամբ և մարդկային հոգու թուլությամբ: Նույնիսկ ամենահզոր մարդը պետք է ուտի և խմի, ինչպես և մենք բոլորս: Նա հիվանդանում և ծերանում է:

**Ե.** Բայց ժամանակակից գիտությունը զարմանալի միջոցներ է տալիս մարդկային բնության սահմանափակումները հաղթահարելու համար:

**Կ.Շ.** Իհարկե: Տիրակալը կարող է կանչել իր մոտ ամենահայտնի բժիշկներին և նոբելյան դափնեկիրներին: Նա կարող է ավելի շատ ներարկումներ ստանալ, քան ցանկացած այլ անձ: Բայց մի քանի ժամ տևած աշխատանքից կամ ցուփությունից հետո նա կհոգնի և կքնի: Սարսափելի Կարակալան, զորեղ Չինգիզ խանը քնած են փոքրիկ երեխայի պես և, հնարավոր է՝ նաև խռացնում են:

**Ե.** Այդ կերպարներին յուրաքանչյուր տիրակալ պետք է միշտ ունենա իր աչքերի առաջ:

**Կ.Շ.** Իհարկե, փիլիսոփաներն ու բարոյախոսները, մանկավարժներն ու հմուտ բանախոսները ևս միշտ սիրել են ներկայացնել նրանց: Բայց մենք կանգ չենք առնի սրա վրա: Պարզապես կցանկանայի նշել, որ մարդկային իշխանության դեռևս ամենաարդիական փիլիսոփաներից մեկը՝ անգլիացի Թոմաս Հոբսը, պետության մասին իր կոնստրուկցիայում հիմնվում է յուրաքանչյուր մարդկային անհատականության այս ընդհանուր թուլության վրա: Հոբսն այսպես է խորհում՝ թուլությունից ծնվում է վտանգ, վտանգից՝ վախ, վախից՝ անվտանգության կարիք, իսկ դրանից, իր հերթին, քիչ թե շատ բարդ կազմակերպվածությամբ պաշտպանական ապարատի անհրաժեշտություն: Բայց ի

հեծուկս պաշտպանական բոլոր միջոցառումների, ասում է Հոբսը, անհրաժեշտ պահի յուրաքանչյուրը կարող է սպանել յուրաքանչյուրին: Թույլ մարդը կարող է հայտնվել այնպիսի իրավիճակում, որ կկարողանա ոչնչացնել ամենաուժեղ և ամենազորեղ մարդուն: Այս հարցում մարդիկ իսկապես հավասար են այն իմաստով, որ նրանք բոլորն էլ սպառնում են բոլորին, և նրանց բոլորին սպառնում է վտանգը:

**Ե.** Թույլ սփոփանք է:

**Կ.Շ.** Ես, ըստ էության, չէի ուզում ո՛չ մխիթարել, ո՛չ վախեցնել, այլ միայն ուզում էի տալ մարդկային իշխանության օբյեկտիվ պատկերը: Եվ ֆիզիկական սպառնալիքը, ըստ այդմ, միայն ամենակոպիտն է և ամենևին ոչ մշտական:

Յուրաքանչյուր մարդկային անհատականության սերտ սահմանների մեկ այլ ազդեցությունն անգամ ավելի հարմար է ցույց տալու համար, թե ինչպիսին է իրավիճակը, այն է՝ յուրաքանչյուր իշխանության՝ սեփական օրենքներով օբյեկտիվ զարգացումը տիրակալի նկատմամբ և իշխանության ու անզորության ներքին անխուսափելի դիալեկտիկան, ինչին դատապարտված էր յուրաքանչյուր մարդկային տիրակալ:

!

Օրեցօր և ժամ առ ժամ նրա վրա բարդվում են բազմաթիվ փաստեր և հաղորդագրություններ, առաջարկություններ և ենթադրություններ: Ճշմարտության և ստի, իրականության և հավանականության այս անվերջ փոթորկվող ծովից նույնիսկ ամենախելացի և ամենահզոր մարդը առավելագույնը մի քանի կաթիլ կարող է վերցնել:

**Ե.** Այստեղ իսկապես կարելի է տեսնել բացարձակ տիրակալների շքեղությունն ու աղքատությունը:

**Կ.Շ.** Այստեղ առաջին հերթին տեսանելի է մարդկային իշխանության ներքին դիալեկտիկան: Նա, ով զենկուցում է տիրակալին կամ տեղեկություն է հայտնում, արդեն իսկ տիրապետում է իշխանության մի բաժնի՝ անկախ նրանից՝ պատասխանատու նախարար է, ով իր ստորագրությամբ

հաստատում է պաշտոնական փաստաթղթերը, թե ոչ, կամ թե նա ինչ-որ կերպ կարող է անուղղակի ձևով հասնել տիրակալի ականջին: Սա բավարար է, որպեսզի նա ենթադրություններ և դրդապատճառներ փոխանցի այն անհատին, ում ձեռքերում այս պահին գտնվում է որոշումը: Այսպես ցանկացած ուղղակի իշխանություն դառնում է անուղղակի ազդեցությունների ենթակա: Եղել են տիրակալներ, ովքեր զգացել են այս կախվածությունը և զայրույթով ու ցասումով են լցվել: Այնուհետև նրանք փորձել են տեղեկություն ստանալ ոչ թե իրենց պատասխանատու խորհրդատուից, այլ մեկ այլ տեղից:

**Ե.** Նկատի ունենալով կոռուպցիան արքունիքում՝ դա, իհարկե, արդարացված էր:

**Կ.Շ.** Անշուշտ: Արդյունքում նրանք, դժբախտաբար, ընկնում էին նոր և հաճախ գրոտեսկային կախվածության մեջ: Ի վերջո Խալիֆ Հարուն ալ-Ռաշիդը՝ քողարկված որպես հասարակ մարդ, գիշերը շրջում էր Բաղդադի պանդոկներով՝ ձձմարտությունը վերջապես պարզելու համար: Ես չգիտեմ, թե ինչ է նա գտել այդ կասկածելի աղբյուրում և ինչ է խմել դրանից: Ֆրիդրիխ Մեծն իր կյանքի մայրամուտին այնքան կասկածամիտ դարձավ, որ միայն իր անձնական սպասավոր Ֆրեդերսդորֆի հետ էր անկեղծ գրուցում: Դրա հետևանքով սպասավորը ազդեցիկ անձ դարձավ, թեև մնացած բոլոր առումներով շարունակում էր մնալ հավատարիմ և պարկեշտ:

**Ե.** Այլ տիրակալներ այդ պարագայում դիմում են իրենց վարորդին կամ իրենց սիրուհուն:

**Կ.Շ.** Այլ կերպ ասած՝ ուղղակի իշխանության յուրաքանչյուր շինության առջև ձևավորվում է այսպես կոչված անուղղակի ազդեցությունների և ուժերի նախասրահ, հասանելիություն ականջին, դեպի տիրակալի հոգին տանող միջանցք: Առանց այս նախասրահի և առանց այս միջանցքի մարդկային իշխանությունը պարզապես չի կարող լինել:

**Ե.** Բայց խելամիտ ինստիտուտների և սահմանադրական սահմանումների օգնությամբ հնարավոր է կանխել որոշ չարաշահումներ:

**Կ.Շ.** Դա կարելի է ու նաև պետք է անել: Բայց ոչ մի, նույնիսկ ամենախելամիտ հաստատությունը, ոչ մի խորամանկ կազմակերպություն չեն կարող ամբողջությամբ արմատախիլ անել այս նախասրահը. «Camarilla»-ին, «կամարիլիային», «գաղտնի սենյակին» կամ «Antichambre»-ին, «նախասենյակին» ընդդեմ ոչ մի նոպա չի կարող ամբողջովին վերացնել այն: Նախասրահից խուսափելն անհնար է:

**Ե.** Ինձ համար դա ավելի շատ նման է ետնամուտքի:

**Կ.Շ.** Նախասենյակ, ետնամուտք, ընդունարան, նախասրահ, շրջակա շինություն, սենյակ ներքևում. ինչպես էլ որ կոչես, այս երևույթն ինքնին պարզ է, և մարդկային իշխանության դիալեկտիկայի համար այն նույնն է մնում: Համենայն դեպս, աշխարհի պատմության ընթացքում իշխանության այս նախասրահում հավաքվել է խայտաբղետ և խառնիճադանջ հասարակություն: Այստեղ հավաքվում են «անուղղակիները»: Այստեղ մենք հանդիպում ենք գեղեցիկ համազգեստով նախարարների և դեսպանների, բայց նաև խոստովանահայրերի և պալատական բժիշկների, համհարզների (աղյուտանտ) և քարտուղարների, սպասավորների և ֆավորիտների: Այստեղ ազնվական կայսրուհի Օգոստինայի կողքին կանգնած է ծերունի Ֆրեդերսդորֆը՝ Ֆրիդրիխ Մեծի սպասավորը, Ռասպուտինը՝ կարդինալ Ռիշելյոի կողքին, ոմն «մոխրագույն կարդինալ»՝ ինչ-որ Մեսալինայի կողքին: Երբեմն այս նախասրահում լինում են խելացի և իմաստուն մարդիկ, երբեմն՝ հիանալի մենեջերներ կամ ջանացող մարդպետեր, երբեմն՝ հիմար կարիերիստներ և խարդախներ: Երբեմն նախասրահն իսկապես պաշտոնական պետական դահլիճ է, որտեղ արժանի պարոնայք հավաքվում են զեկույցի համար՝ սպասելով, որ կանչեն իրենց: Բայց հաճախ դա միայն մասնավոր աշխատասենյակ է:

**Ե.** Կամ նույնիսկ հիվանդանոցային սենյակ, որտեղ մի քանի ընկերներ նստած են պարալիզացված մարդու մահձակալի մոտ և ղեկավարում են աշխարհը:

**Կ.Շ.** Որքան շատ է իշխանությունը կենտրոնացվում որոշակի վայրում, որոշակի անձի կամ մարդկանց խմբի, ինչ-

պես, օրինակ, վերնախավի ճեռքերում, այնքան ավելի է սրվում միջանցքի և վերնախավի հասանելիության խնդիրը: Այդքան ավելի կատաղի, դաժան և անձայն կլինի նաև պայքարը նրանց միջև, ովքեր գրավել և պահում են «նախասրահը» և վերահսկում են «միջանցքը»: Անուղղակի ազդեցությունների մշուշում այս պայքարը նույնքան անխուսափելի է, որքան և անհրաժեշտ մարդկային ցանկացած իշխանության համար: Դրանում է տեղի ունենում մարդկային իշխանության ներքին դիալեկտիկան:

**Ե.** Բայց չէ՞ որ այս ամենը ոչ միայն այլասերվածություն է, այլև անձնական իշխանության ռեժիմի հստակ չարաշահում:

**Կ.Շ.** Ոչ: Միջանցքի ձևավորման գործընթացը, որի մասին մենք խոսում ենք, տեղի է ունենում նվազագույն, անվերջ փոքրաքանակ նախաձեռնություններում ամեն օր, ամենուր, որտեղ որոշ մարդիկ իշխանություն են իրականացնում այլ մարդկանց նկատմամբ: Որևէ կառույցում իշխանության կենտրոնանալուն զուգահեռ անմիջապես կազմակերպվում է նաև նախասրահ դեպի այդ իշխանություն: Ուղղակի իշխանության ցանկացած ուժեղացում խտացնում ու պընդացնում է նաև անուղղակի ազդեցությունների մթնոլորտը:

**Ե.** Դա կարող է նույնիսկ լավ լինել, երբ տիրակալի հետ ամեն ինչ կարգին չէ: Ես դեռ չգիտեմ, թե որն է այստեղ ավելի լավ՝ ուղղակի իշխանությունը, թե անուղղակին:

**Կ.Շ.** Այստեղ ես անուղղակին դիտարկում եմ միայն որպես մարդկային իշխանության անխուսափելի դիալեկտիկ զարգացման մեկ փուլ: Տիրակալն ինքը մեկուսացվում է այնքան, որքան ուղղակի իշխանություն է կենտրոնացվում նրա անհատականության մեջ: Միջանցքը կտրում է նրան երկրից և բարձրացնում դեպի այսպես կոչված ստրատոսֆերա, որտեղ նա կարող է հասնել միայն նրանց, ովքեր անուղղակիորեն ղեկավարում են իրեն, մինչդեռ մնացած բոլոր մարդկանց, ում ղեկավարում է ինքը, այլևս չի կարող հասնել, և նրանք նույնպես այլևս չեն կարող հասնել տիրակալին: Ծայրահեղ դեպքերում դա հաճախ նկատելի է դառնում բառացիորեն գրոտեսկային եղանակով: Բայց սա միայն տիրակալի մեկուսացման



ամենաձայրահեղ հետևանքն է անխուսափելի իշխանական ապարատի միջոցով: Նույն ներքին տրամաբանությունն է տեղի ունենում առօրյա կյանքի անթիվ դրսևորումներում՝ ուղղակի իշխանության և անուղղակի ազդեցության մըը-տական փոփոխությունների մեջ: Մարդկային ոչ մի իշխանություն չի կարող խուսափել ինքնահաստատման և ինքըն-օտարման այս դիալեկտիկայից:



### *Ինտերմեցո*

## **ԲԻՍԱՐԿ ԵՒ ՄԱՐԿԻԶ ՊՈԶԱ**

Հանուն միջանցքի, իշխանական վերնախավի հասանելիության պայքարը ինտենսիվ պայքար է հատկապես իշխանության համար, որում տեղի է ունենում մարդկային իշխանության և անզորության ներքին դիալեկտիկա: Մենք առաջին հերթին պետք է հասկանանք այս իրողությունն իր իրականության մեջ՝ առանց հռետորաբանության և սենտիմենտալության, բայց նաև առանց ցինիզմի կամ նիհիլիզմի: Այդ պատճառով ես կցանկանայի պարզաբանել այս խնդիրը ևս երկու օրինակով:

Առաջին օրինակը սահմանադրական իրավունքի պատմության փաստաթուղթն է՝ Բիսմարկի՝ 1890 թվականի մարտին տված դիմումը հրաժարականի մասին: Այս դիմումը մեջբերված և մանրամասնորեն ուսումնասիրված է իշխան Բիսմարկի կողմից իր «Խոհեր և հուշեր»-ի երրորդ հատորում: Այս փաստաթուղթն ամեն ինչով՝ իր մտահղացմամբ և կառուցվածքով, իր մտքի և ինտոնացիայի ընթացքով, նրանով, ինչ ասված է դրա մեջ և ինչի մասին լռում է, պետական քաղաքականության մեծ վարպետի լավ մտածված աշխատանք է: Սա Բիսմարկի վերջին պաշտոնական ակտն էր, ուստի այն միանգամայն գիտակցաբար կազմված և ոճաբանված էր որպես փաստաթուղթ ապագա սերունդների համար: Ծեր, փորձառու ռայխսկանցլերը՝ կայսրության հիմնադիրը, բանավիճում է անփորձ ժառանգի՝ երիտասարդ թագավոր և կայսր

Վիլիելմ Երկրորդի հետ: Նրանց երկուսի միջև առկա էին բազմաթիվ կոնկրետ հակասություններ և կարծիքների տարբերություններ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության հարցերի շուրջ: Բայց հրաժարակա- նի դիմումի առանցքը՝ դրա վճռորոշ պահը, զուտ ֆորմալ ինչ-որ բան էր. վեճ այն մասին, թե ինչպես կարող է կանցլերը տեղեկատվություն ստանալ, և թե ինչպես պետք է տեղեկատվություն ստանան թագավորն ու կայսրը: Բիսմարկն այստեղ լիարժեք ազատության է հավակնում այն հարցի վերաբերյալ, թե ում հետ է զրուցում և ում է ընդունում իր տանը որպես հյուր: Բայց նա մերժում է թագավորի և կայսեր իրավունքը՝ լսել նախարարներից որևէ մեկի զեկույցը, եթե զեկույցին ներկա չէ Բիսմարկը՝ վարչապետը: Այսպիսով՝ թագավորի մոտ ուղղակի զեկույց- ման խնդիրը դառնում է Բիսմարկի հրաժարականի դիմու- մի առանցքային հարցը: Դրանից է սկսվում Երկրորդ կայսրության ողբերգությունը: Ընդհանրապես թագավորին զեկույցելու խնդիրը ցանկացած միապետության կենտրո- նական խնդիրն է, քանի որ դա նաև վերնախավի հասա- նելիության խնդիրն է: Բարոն Ֆոն Շթայնը նույնպես ուժաթափ է եղել կաբինետային գաղտնի հանդիպումների դեմ պայքարում: Բիսմարկը ևս ստիպված էր ձախողվել վերնախավի հասանելիության հին և հավերժական խնդրի պատճառով:

Երկրորդ օրինակը կվերցնենք Ֆրիդրիխ Շիլլերի «Դոն Կարլոս» դրամատիկական բանաստեղծությունից: Այստեղ մեծ դրամատուրգը ներկայացնում է իր տեսակետները իշխանության էության վերաբերյալ: Դրամայի գործողու- յունը պտտվում է հետևյալ հարցի շուրջ. ով անմիջական մուտք ունի թագավորի՝ բացարձակ միապետ Ֆիլիպ Երկ- րորդի մոտ: Նա, ով անմիջական մուտք ունի, տիրապետում է նաև թագավորի իշխանության մի մասին: Նախկինում թագավորի խոստովանահայրը և Ալբայի դուքս գեներալը գրավել էին իշխանության նախասրահը և արգելափակել թագավորի մոտ տանող մուտքը: Այժմ հայտնվում է երրորդը՝ մարկիզ Պոզան, և մյուս երկուսն անմիջապես գիտակցում են այդ վտանգը: Երրորդ գործողության ավարտին դրա- մայի լարվածությունը հասնում է իր գագաթնակետին. գործողության վերջին նախադասությամբ թագավորը հրա- մայում է. «Մարկիզ Պոզային ուղեկցել ինձ մոտ առանց որևէ

զեկույցի, կոճմա»: Սա մեծ դրամատիկ էֆեկտ է ունենում ոչ միայն հանդիսատեսի, այլև հենց դրամայի գործող անձանց վրա: «Սա իսկապես արդեն շատ է», - ասում է Դոն Կառլոսը, երբ տեղեկանում է այդ մասին, - «շատ, ահավոր շատ», և թագավորի խոստովանահայր Դոմինգոն դողալով ասում է Ալբայի դուքսին. «Մեր ժամանակներն անցել են»: Այս գազաթնակետից հետո անակնկալ շրջադարձ է կատարվում դեպի ողբերգություն, հրաշալի դրամայի հանկարծական փոփոխություն: Տիրակալի մոտ անմիջական հասանելիություն ունենալու պատճառով դրժբախտ մարկիզ Պոզային է հասնում մահաբեր կրակոցը: Կկարողանա՞ր արդյոք նա իր հերթին ամրապնդել իր դիրքը թագավորի մոտ և հաղթանակել խոստովանահորն ու գեներալին՝ մենք դա չգիտենք:



**Կ.Շ.** Ինչքան էլ արտահայտիչ լինեն այս օրինակները, մի մոռացեք, հարգելի պարոն Ե.՝ ինչ կապի մեջ է այս ամենը մեզ հետաքրքրում. մասնավորապես՝ ինչպես մարդկային իշխանության ներքին դիալեկտիկայի պահերից մեկը: Կան մի քանի այլ հարցեր, որոնք մենք կարող էինք այստեղ քննարկել, օրինակ՝ իշխանության ժառանգականության խորը խնդիրը՝ լինի դա դինաստիական, ժողովրդավարական, թե խարիզմատիկ: Բայց հիմա պետք է բավականաչափ պարզ լինի, թե ինչպես է հասկացվում դիալեկտիկան:

**Ե.** Ես ամենուրեք տեսնում եմ միայն մարդու շքեղությունն ու աղքատությունը, իսկ Դուք միշտ խոսում եք ներքին դիալեկտիկայի մասին: Հետևաբար ես ցանկանում եմ մի շատ պարզ հարց տալ. եթե իշխանությունը, որն իրականացնում են մարդիկ, չի բխում Աստուծոց կամ բնությունից, այլ մարդկանց ներքին գործն է, ուրեմն դա բարիք է, թե՛ չարիք, կամ ի՞նչ է այն:

**Կ.Շ.** Այս հարցն ավելի վտանգավոր է, քան Դուք, երևի, ինքներդ ենթադրում եք: Քանի որ մարդկանց մեծամասնությունը լիարժեք վստահությամբ կպատասխանի այսպես. իշխանությունը բարիք է, երբ իմ ձեռքերում է, և

իշխանությունը չարիք է, երբ իմ թշնամու ձեռքերում է:

**Ե.** Ավելի լավ է՝ այսպես ասենք. իշխանությունն ինքնին ո՛չ բարիք է, ո՛չ էլ չարիք, նա չեզոք է, այնպիսին է, ինչպիսին կերտում է նրան մարդը. բարի մարդու ձեռքում այն բարիք է, չարի ձեռքում՝ չարիք:

**Կ.Շ.** Բայց ո՞վ է կոնկրետ դեպքում որոշում՝ բարի է մարդը, թե չար: Տիրակա՛լը, թե՛ ոմն մեկը: Եթե ինչ-որ մեկը իշխա- նություն ունի, նշանակում է, որ, այնուամենայնիվ, առաջին հերթին ինքն է որոշում: Ի վերջո սա նույնպես պատկանում է նրա իշխանությանը: Եթե մեկ ուրիշն է որոշում կայացնում այդ մասին, ապա իշխանությունը հենց այդ մեկի ձեռքում է, կամ, առնվազն, նա հավակնում է այդ իշխանությանը:

**Ե.** Այդ դեպքում իշխանությունն ինքնին չեզոք է թվում:

**Կ.Շ.** Նա, ով հավատում է ամենակարող և գթասիրտ Աստծուն, չի կարող իշխանությունը հայտարարել չար կամ նույնիսկ չեզոք: Քրիստոնեության առաքյալ Սուրբ Պողոսը, ինչպես գիտեք, հռոմեացիներին ուղղված նամակում ասում է. «Ամեն իշխանություն Աստծուց է»: Սուրբ Պապ Գրիգորիոս I Մեծը՝ պապի՝ ժողովուրդների հովվի նախատիպը, այս մասին արտահայտվում է ամենամեծ պարզությամբ և վճռականությամբ: Լսե՛ք, թե ինչ է նա ասում.

«Աստված գերագույն իշխանություն է և բարձրագույն գոյություն: Ամեն իշխանություն Նրանից է, կա և գոյութ- յուն ունի Նրա էության մեջ՝ աստվածային և բարի: Եթե սատանան իշխանություն ունենար, ապա այդ իշխանութ- յունը նույնպես, հենց այն պատճառով, որ իշխանություն է, աստվածային և բարի կլիներ: Միայն սատանայի կամքն է չար: Բայց, չնայած այս միշտ չար, սատանայական կամքին, իշխանությունն ինքնին մնում է աստվածային և բարի»:

Սրանք են մեծն սուրբ Գրիգորի խոսքերը: Նա ասում է. «Միայն իշխանության ձգտումն է չար, բայց իշխանությունն ինքնին միշտ էլ բարի է»:

**Ե.** Դա իսկապես անհավատալի է: Այստեղ ինձ համար ավելի հասկանալի է Յակոբ Բուրքհարդտը, ով, ինչպես հայտնի է,

ասել է՝ իշխանությունն ինքնին չարիք է:

**Կ.Շ.** Եկեք քննարկենք Բուրքհարդտի այս հայտնի հայտարարությունը ավելի մանրամասն: Նրա «Մտորումներ համաշխարհային պատմության մասին» ստեղծագործության կարևոր մասն այսպես է հնչում.

«Եվ այստեղ պարզվում է (հիշենք Լուի XIV-ին, Նապոլեոնին, հեղափոխական ժողովրդական կառավարությունները), որ իշխանությունը ինքնին չարիք է (Շլուս-սեր), որ, առանց որևէ կրոն նկատի ունենալու, էգոիզմի այն իրավունքը, որը մերժում է անհատը, ընդունվում է պետության համար»:

Շյոնգերի անունն ավելացրել է «Մտորումներ համաշխարհային պատմության մասին»-ի հրատարակիչը՝ Բուրկխարդտի եղբորորդի Յակոբ Յորին, փակագծերի մեջ՝ որպես օրինակ կամ որպես հեղինակություն:

**Ե.** Շյոնգեր, նա կարծես Գյոթեի աներորդին էր:

**Կ.Շ.** Գյոթեի աներորդու անունը Յոհան Գեորգ Շյոնգեր էր: Այստեղ նկատի ունենք Ֆրիդրիխ Քրիստոֆ Շյոնգերին՝ մարդասիրական համաշխարհային պատմության հեղինակին, ում Յակոբ Բուրքհարդտը հաճույքով մեջբերում էր իր դասախոսություններում: Բայց երկուսն էլ կամ նույնիսկ բոլոր երեքն էլ՝ Յակոբ Բուրքհարդտը և երկու Շյոնգերները, իմ կարծիքով դեռևս շատ հեռու են Գրիգորիա Մեծից:

**Ե.** Բայց մենք, վերջիվերջո, այլևս չենք ապրում վաղ միջնադարում: Վստահ եմ, որ այսօր Բուրքհարդտը շատերի համար ավելի հասկանալի է, քան Գրիգորիա Մեծը:

**Կ.Շ.** Ակնհայտ է, որ Գրիգորիա Մեծի ժամանակներից ի վեր իշխանության հետ կապված ինչ-որ էական բան պետք է փոխվեր: Չէ որ Գրիգորիա Մեծի օրոք էլ են տեղի ունեցել ամեն տեսակի պատերազմներ և սարսափներ: Մյուս կողմից՝ տիրակալները, որոնց օրինակների վրա Բուրքհարդտը ցանկանում էր ցույց տալ, որ իշխանությունը չարիք է՝ Լուի XIV-ը, Նապոլեոնը և ֆրանսիական հեղափոխական կառավարությունները, արդեն բավականին ժամանակակից տիրակալներ են:

**Ե.** Նրանք նույնիսկ մեքենայացված չէին: Իսկ ատոմային և ջրածնային ռումբերի մասին երազել անգամ չէին կարող:

**Կ.Շ.** Մենք կարող ենք Շյոքերին և Բուրքհարդտին համարել գուցե ոչ սուրբ, բայց բարեպաշտ մարդիկ, ովքեր այս մասին թեթևամտորեն չէին արտահայտվի:

**Ե.** Բայց այդ դեպքում ինչպե՞ս է ստացվում, որ յոթերորդ դարի բարեպաշտ մարդը իշխանությունը համարում է բարիք, մինչդեռ տասնիններորդ և քսաներորդ դարի բարեպաշտ մարդիկ այն չարիք են համարում: Այստեղ ինչ-որ շատ էական բան պետք է փոխվեր:

**Կ.Շ.** Կարծում եմ, որ անցյալ դարում մարդկային իշխանության էությունը մեզ համար բացահայտվեց շատ առանձնահատուկ ձևով: Տարօրինակ է, որ չար իշխանության մասին թեզը տարածվում է հենց տասնիններորդ դարից սկսած: Չէ որ մենք մտածում էինք, որ իշխանության խնդիրը կլուծվի կամ կզրկվի իր սրությունից, եթե իշխանությունը չի բխում ո՛չ Աստուծուց, ո՛չ էլ բնությունից, այլ մի բան է, որի շուրջ մարդիկ պայմանավորվում են իրար մեջ: Էլ ինչից պետք է վախենա մարդը, եթե Աստված մեռած է, և նույնիսկ երեխաները չեն վախենում գայլից: Բայց հատկապես այն դարաշրջանից, երբ կարծես թե ավարտվեց իշխանության այս մարդկայնացումը, Ֆրանսիական հեղափոխությունից սկսած անհաղթահարելիորեն տարածվում է այն համոզմունքը, որ իշխանությունն ինքնին չարիք է: «Աստված մեռած է» և «Իշխանությունն ինքնին չարիք է» արտահայտությունները ծագում են միևնույն ժամանակ և նույն իրավիճակից: Ըստ էության՝ երկուսն էլ նույն բանի մասին են խոսում:

**Ե.** Իրականում դա դեռ բացատրություն է պահանջում:

**Կ.Շ.** Որպեսզի ճիշտ ըմբռնենք մարդկային իշխանության էությունը, թե ինչպես է այն բացահայտվում մեր ներկայիս իրավիճակում, մեզ համար առավել ճիշտ կլինի օգտվել մի հարաբերակցությունից, որը գտել է արդեն իսկ հիշատակված, զուտ մարդկային իշխանության դեռևս ամենաարդիական փիլիսոփան՝ բրիտանացի Թոմաս Հոբսը: Նա ամենաձգձգրիտ ձևով արտահայտել և սահմանել

է այս հարաբերակցությունը, և մենք կցանկանայինք կոչել այն նրա անունով, այն է՝ «վտանգի հորսային հարաբերակցություն»: Հոբսն ասում է. «Մարդը բոլոր մյուս մարդկանց համար, որոնց մասին մտածում է, թե վտանգավոր են, նույնքան ավելի վտանգավոր է, որքան ցանկացած գազան, նույնքան ավելի վտանգավոր է նրա զենքը, քան ցանկացած այլ գազանի զենք»: Սա հստակ և որոշակի հարաբերակցություն է:

**Ե.** Դեռ Օսվալդ Շպենգլերն էր ասում, որ մարդը գիշատիչ գազան է:

**Կ.Շ.** Կներե՞ք: Վտանգի հարաբերակցությունը, որը վեր է հանում Թոմաս Հոբսը, ոչ մի ընդհանրություն չունի Օսվալդ Շպենգլերի թեզի հետ: Ընդհակառակը, Հոբսը ենթադրում է, որ մարդն ամենևին գազան չէ, այլ միանգամայն այլ բան, մի կողմից՝ ավելի փոքր, մյուս կողմից՝ շատ ավելի մեծ: Մարդն ի վիճակի է տեխնիկական գյուտերով անհավատալիորեն հավասարակշռել իր կենսաբանական թուլությունն ու անբավարարությունը, նույնիսկ չափից ավելի հավասարակշռել: Այժմ ուշադրություն դարձրեք ահա թե ինչին: 1650 թվականին, երբ Հոբսը հայտարարեց միջոցառումների այս հարաբերակցությունը, մարդու զենքը նետն ու աղեղն էին, կացինը և թուրը, զենքը և հրանոթները, որոնք արդեն իսկ բավականին վտանգավոր էին և առյուծի ձիրաններին կամ գայլի ատամներին շատ ավելի գերազանցող: Այսօր, սակայն, տեխնիկական միջոցների վտանգը անսահմանորեն աճել է: Այս ամենի արդյունքում համապատասխանաբար ավելացել է նաև մարդու վտանգը այլ անձանց համար: Այս ամենի արդյունքում իշխանության և անիշխանության միջև տարբերությունն աճում է այնպիսի անսահման ձևով, որ մարդու գաղափարը բերում է հարցի բոլորովին նոր ձևակերպման:

**Ե.** Ես դա չեմ հասկանում:

**Կ.Շ.** Լսեք: Ո՞վ է, ըստ էության, մարդը: Նա, ով արտադրում և օգտագործում է ոչնչացման այս ժամանակակից միջոցները, թե՛ նա, ում դեմ դրանք օգտագործվում են: Մենք նույնիսկ մեկ քայլ էլ առաջ չենք գնա, եթե մեզ ասեն՝ իշխանությունը, ինչպես և տեխնիկան, ինքնին ոչ բարիք

է, ոչ էլ չարիք, այն չեզոք է. արդյունքում նա այն է, ինչ մարդը ստեղծում է դրանից: Սա պարզապես կնշանակեր խոյս տալ իրական դժվարությունից, ամենաբարդ հարցից, թե ով է այստեղ բարու և չարի մասին որոշում կայացնողը: Ոչնչացման ժամանակակից միջոցների իշխանությունը մարդկային անհատներին, ովքեր դրանք ստեղծում և կիրառում են, գերազանցում է այնքան, որքան ժամանակակից մեքենաների և գործընթացների հնարավորություններն են գերազանցում մարդկային մկանների և ուղեղների ուժը: Այս ստրատոսֆերայում, ուլտրաճայնային այս ոլորտում բարի կամ չար մարդկային կամքն այլևս գոյություն չունի: Մարդկային ձեռքը, որը պահում է ատոմային ռումբը, մարդկային ուղեղը, որը նյարդավորում է այս մարդկային ձեռքի մկանները, վճռորոշ պահին դառնում են ոչ այնքան առանձին անհատական մարդու անդամ, որքան պրոթեզ, տեխնիկական և սոցիալական սարքավորումների մի մաս, որը արտադրում և օգտագործում է ատոմային ռումբը: Անհատական տիրակալի իշխանությունը այստեղ միայն իրադրության առանձնացում է, որը բխում է անկանխատեսելիորեն ավելացած աշխատանքի բաժանման համակարգից:

**Ե.** Բայց արդյո՞ք հրաշալի չէ այն, որ այսօր մենք ներթափանցում ենք ստրատոսֆերա, ուլտրաճայնային դաշտ կամ տիեզերական տարածություն, և որ մենք ունենք մեքենաներ, որոնք համրում են ավելի արագ և լավ, քան ցանկացած մարդկային ուղեղ:

**Կ.Շ.** Հենց այս «մենք» բառն էլ իր մեջ պարունակում է հարցի էությունը: Չէ որ այս ամենը անում է ոչ թե մարդը՝ որպես մարդ, այլ նրա կողմից ազատ թողնված շղթայական ռեակցիան: Դուրս գալով մարդու ֆիզիկական բնույթից՝ այն անդրացականանում է նաև մարդու վրա մարդու ցանկացած հնարավոր իշխանության միջանձնային սահմանը: Այն գերազանցում է պաշտպանության և հնազանդության հարաբերակցությունը: Իշխանությունը շատ ավելին, քան տեխնոլոգիան, դուրս է պրծել մարդու ձեռքից, և մարդիկ, ովքեր նման տեխնիկական միջոցների շնորհիվ իրենց իշխանությունն են իրականացնում այլ մարդկանց վրա, այլևս յուրային չեն համարվում իրենց իշխանությանը ենթարկվողների շրջանում:



**Ե.** Բայց նրանք, ովքեր հնարում և արտադրում են ոչնչացման ժամանակակից միջոցները, ի վերջո նույնպես միայն մարդիկ են:

**Կ.Շ.** Այդպես էլ նրանց նկատմամբ իշխանությունը, որի պատճառը նրանք հանդիսանում են, ներկայացնում է օբյեկտիվ, իր սեփական օրենքներով զարգացող արժեք, որը անսահմանորեն գերազանցում է յուրաքանչյուր առանձին գյուտարարի խիստ սահմանափակ ֆիզիկական, մտավոր և հոգևոր ունակությունը: Ստեղծելով ոչնչացման այս միջոցները՝ այս գյուտարարները միաժամանակ անգիտակցաբար աշխատում են նոր Լևիաթանի առաջացման վրա: Արդեն տասնվեցերորդ և տասնյոթերորդ դարերի ժամանակակից լավ կազմակերպված եվրոպական պետությունը արիեստական տեխնիկական արտադրանք է՝ մարդկանց կողմից ստեղծված և գերմարդու կողմից մարդկանցից կազմված, ով Լևիաթանի կերպարում՝ որպես մեծ մարդ, *μάχρος άνθρωπος*, ուժերի հսկայական գերակայությամբ ընդդիմանում էր իրեն արտադրող փոքր մարդուն, առանձին անհատին, *μάχρος άνθρωπος*: Այս իմաստով Նոր շրջանի լավ գործող եվրոպական պետությունը ժամանակակից առաջին մեքենան էր և միևնույն ժամանակ կոնկրետ նախադրյալ բոլոր հետագա տեխնիկական մեքենաների համար: Այն մեքենաների մեքենան էր, *machina machinarum*՝ գերմարդու կողմից մարդկանցից կազմված, որն ստեղծվում է մարդկանց համաձայնության արդյունքում, և, այնուամենայնիվ, երբ այն հայտնվում է, անմիջապես գերազանցում է մարդկային ցանկացած համաձայնություն: Հենց այն պատճառով, որ խոսքը այստեղ մարդկանց կազմակերպած իշխանության մասին է, Բուրքհարդտն ընկալում է դա որպես չարիք: Այդ իսկ պատճառով իր հայտնի ասույթում նա հղում է կատարում ոչ թե Ներոնին կամ Չինգիզ խանին, այլ ժամանակակից տիպիկ եվրոպական տիրակալներին՝ Լուի XIV-ին, Նապոլեոնին և հեղափոխական ժողովրդական կառավարություններին:

**Ե.** Հնարավոր է՝ հետագա գիտական հայտնագործությունները կկարողանան փոխել այս ամենը և կարգի բերել:

**Կ.Շ.** Դա լավ կլիներ: Բայց ինչպե՞ս կարող են դրանք փոխել

այն փաստը, որ իշխանությունն ու անիշխանությունն այլևս չեն հակադրվում միմյանց և այլևս տեսանելի չեն մարդու և մարդու միջև: Մարդկային զանգվածները, որոնք իրենց ոչնչացման ժամանակակից միջոցների ազդեցության անզոր ենթարկվածներ են զգում, նախևառաջ գիտեն, որ իրենք անզոր են: Իշխանության իրականությունը պարզապես շրջանցում է մարդու իրականությունը:

Ես չեմ ասում, որ մարդու իշխանությունը մարդու վրա բարիք է: Ես չեմ ասում նաև, որ դա չարիք է: Եվ հատկապես չեմ ասում, որ այն չեզոք է: Եվ ինձ համար՝ որպես մտածող մարդու, ամոթալի կլիներ ասել, որ իշխանությունը բարիք է, երբ այն պատկանում է ինձ, և որ այն չարիք է, երբ իմ թշնամու ձեռքում է: Ես պարզապես ասում եմ, որ այն անկախ իրողություն է ցանկացածի, նաև տիրակալի նկատմամբ, և քաշում է նրան դեպի իր դիալեկտիկա: Իշխանությունն ավելի ուժեղ է, քան իշխանության ցանկացած ձգտում, քան մարդկային ցանկացած բարություն և, բարեբախտաբար, ավելի ուժեղ է, քան մարդկային ցանկացած չարություն:

**Ե.** Թեև մխիթարական է այն, որ իշխանությունը՝ որպես օբյեկտիվ մեծություն, պետք է ավելի ուժեղ լինի, քան ամբողջ չարությունը այն մարդկանց, ովքեր իշխանություն են իրականացնում, այնուամենայնիվ, մյուս կողմից անբավարար է մնում այն, որ նա պետք է նաև ավելի ուժեղ լինի մարդկանց բարությունից: Ինձ համար սա այնքան էլ դրական չէ: Պետք է հուսալ, որ Դուք մակիավելլիստ չեք:

**Կ.Շ.** Ես հաստատ մակիավելլիստ չեմ: Սակայն մակիավելլին ինքն էլ մակիավելլիստ չէր:

**Ե.** Դա ինձ համար շատ պարադոքսալ է հնչում:

**Կ.Շ.** Դա բավականին պարզ է: Եթե մակիավելլին մաքիավելլիստ լիներ, ապա նա, անշուշտ, չէր գրի գրքեր, որոնք իրեն վատ լույսի ներքո են ներկայացնում: Նա կիրապարակեր բարեպաշտ և ուսանելի գրքեր. ամենից լավ տարբերակը կլիներ «Հակա-մակիավելլին»:

**Ե.** Դա, բնականաբար, ավելի խորամանկ կլիներ: Բայց չէ՞ որ Ձեր գաղափարների կիրառումից պետք է գործնական

օգուտ լինի: Ինչ է մեզ իրականում պետք անել:

**Կ.Շ.** Ինչ պետք է անենք: Հիշո՞ւմ եք մեր զրույցի սկիզբը: Դուք այն ժամանակ հարցրիք՝ արդյոք ունե՞մ ես իշխանություն, թե ոչ: Հիմա թույլ տվեք ինձ Ձեր նիզակի սույր ծայրը Ձեր դեմ շրջել և հարցնել Ձեզ. Դուք ինքներդ ունե՞ք իշխանություն, թե՞ ոչ:

**Ե.** Կարծես թե Դուք պարզապես ցանկանում եք խուսափել իմ՝ գործնական օգուտի մասին հարցից:

**Կ.Շ.** Ընդհակառակը, ես միայն ցանկացա հնարավորություն ստանալ Ձեր հարցի իմաստալից պատասխանի համար: Եթե ինչ-որ մեկը հարց է տալիս գործնական օգուտի մասին՝ իշխանության հետ կապված, ապա տարբերություն կա՝ նա ինքը իշխանություն ունի, թե ոչ:

**Ե.** Իհարկե: Բայց Դուք ինքներդ կրկին ու կրկին ասում եք, որ իշխանությունը օբյեկտիվ ինչ-որ բան է, և որ այն ավելի ուժեղ է, քան ցանկացած մարդ, ով օգտագործում է այն: Այդպիսով՝ պետք է լինեն գործնական կիրառման մի քանի օրինակներ:

**Կ.Շ.** Նման անթիվ օրինակներ կան ինչպես իշխանություն ունեցողների, այնպես էլ նրանց համար, ովքեր չունեն այն: Արդեն մեծ հաջողություն կլիներ այն, որ իրական իշխանությունը հրապարակայնորեն և տեսանելիորեն հայտնվեր քաղաքական բեմում: Ես, օրինակ, խորհուրդ կտայի տիրակալին չներկայանալ հանրությանը առանց նախարարական կամ համապատասխան այլ հազուստի: Իշխանությունից զրկված անձին ես կասեի՝ մի կարծիր, որ լավն ես միայն այն պատճառով, որ իշխանություն չունես: Եվ եթե նա տառապում է այն փաստից, որ չունի իշխանություն, ես նրան կհիշեցնեի այն մասին, որ իշխանության ձգտումը նույնքան ինքնառջնչացող է, որքան հաճույքի կամ այլ բաների ձգտումը, որոնց համը ավելին է խոստանում: Հիմնադիր կամ սահմանադրական խորհրդակցական ժողովի անդամներին ես հաստատապես կբացատրեի վերնախավի հասանելիության խնդիրը, որպեսզի նրանք չմտածեն, որ կարող են կազմակերպել իրենց երկրի կառավարումը ինչ-որ սխեմայի համաձայն՝ որպես վաղուց հայտնի ինչ-որ

աշխատանք: Կարձ ասած՝ ինչպես տեսնում եք, գործնական կիրառման շատ օրինակներ կան:

**Ե.** Բայց մարդը: Որտեղ է մնում մարդը:

**Կ.Շ.** Այն ամենը, ինչ մտածում կամ անում է մարդը՝ իշխանությամբ կամ առանց դրա, անցնում է մարդկային գիտակցության և մարդու անհատական այլ կարողությունների միջանցքով:

**Ե.** Բայց այդ դեպքում մարդը մարդուն մարդ է:

**Կ.Շ.** Եվ դա նույնպես: Միայն, իհարկե, միշտ շատ կոնկրետ: Սա նշանակում է, օրինակ, մարդ Ստալինը Տրոցկի մարդուն Ստալին է, իսկ մարդ Տրոցկին Ստալին մարդուն՝ Տրոցկի:

**Ե.** Սա՛ կլինի Ձեր վերջին խոսքը:

**Կ.Շ.** Ոչ: Ես պարզապես ուզում էի ասել Ձեզ, որ «մարդը մարդ է մարդուն»՝ homo homini homo հրաշալի ֆորմուլան լուծում չէ, այլ միայն մեր խնդիրների սկիզբն է: Ես այդ մասին քննադատորեն եմ մտածում, բայց բոլորովին հաստատուն իմաստով, հրաշալի բանաստեղծությունների ոգով. «Բայց մարդ լինելը միշտ էլ որոշում է մնում»:

Հենց սա էլ կլինի իմ վերջին խոսքը:

## Հետադարձ հայացք զրույցի ընթացքին

### Ելակետային դիրք

1. Սկիզբ. Մարդը գայլ չէ / և Աստված չէ / այլ մարդ է
2. Աստիճան. Համաձայնությունը իշխանություն է առաջացնում / իշխանությունը համաձայնություն է առաջացնում
3. Փուլ. Իշխանության նախասրահը և վերնախավի հասանելիության խնդիրը  
Ինտերմեցցո. Բիսմարկ և մարկիզ Պոզա
4. Պարզ հարց. Իշխանությունն ինքնին բարիք է / թե՛ չարիք / թե՛ չեզոք է
5. Հասկանալի արդյունք. Իշխանությունը ուժեղ է, քան մարդու բարությունը / կամ չարությունը / կամ չեզոքությունը

### Եզրակացություն

ԿԱՐԼ ՇՄԻԹԻ ԵՒ  
ԷՌԵՍՏ ՅՈՒՆԳԵՐԻ  
ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

## ԷՌԵՍ ՅՈՒՆԳԵՐԸ ԿԱՐԼ ՇՄԻԹԻՆ

(14 b) Վիլֆրիդեն Ռիդլինգենի վրա, 17.12.54.

### Թանկագին Կարլ Շմիթ,

Անցած գիշեր ես կարդացի Ձեր աշխատանքը նույն հետաքրքրված լարվածությամբ, որով ես վաղուց հետևում էի իշխանության շուրջ բանավեժերին, արդեն այն ժամանակվանից, երբ ես մտորում էի «Կարմիր գլխարկի» և այլ հեքիաթների դերերի բաշխման շուրջ:

Դուք կրկին Ձեր ներդրումն ունեցաք, և այս մտքերից ու հիմնական սկզբունքներից որոշները համախոհներ կգտնեն՝ անկախ նրանից՝ նրանք հղում կկատարեն հեղինակին, թե այդ մտքերը կտարածվեն իրենք իրենց՝ լռելով հեղինակի մասին: Վերջինս մտածելու ամենավստահ ձևն է, և ամենահզոր spirit flat ubi vult («ոգին ծախրում է այնտեղ, ուր ուզում է»): Ո՛չ Դուք, ո՛չ էլ ես չենք հավատում նրան, որ այդպես բացարձակ իշխանագուրկ եք, ինչի մասին վերապահում եք անում 7-րդ էջում:

Կենտրոնական մտքի հետ կապված ինձ հատկապես դա դուր եկավ, մասնավորապես՝ իշխանության բարձրացման կամ մինչև անանուն մակարդակ իշխանության տրանսֆորմացիայի վերաբերյալ: Այս կետից երկու հավանական եզրակացություն է բխում. առաջինը, որն առաջանում է ինքնաբերաբար, այն մասին է, որ իշխանությունն սկսեցին չարիք կոչել հենց այն պահից, երբ այն սկսեցին դիտարկել որպես մարդկանց միջև հարաբերություն, և երկրորդը՝ արդյոք անհրաժեշտ չէ, այնուամենայնիվ, անվանել այս անանուն մեծությունը համապարփակ պատկեր ունեցող, և որ հենց դա է հնարավոր և օգտակար լուծումներից մեկը:

Հավանաբար լավ է, որ այս գործը Դուք այդքան կարճ եք ստեղծել: Բայց տիրակալին հասանելիությունը հնագույն երևույթներից մեկն է և հիշողության մեջ գտնում է անթիվ օրինակներ ոչ միայն քաղաքական, այլև կենդանաբանական և սոցիոլոգիական մակարդակում: Ես կնշեմ միայն լոցման ձկների շնաձկների մոտ և կառավարչուհիների կաթոլիկ քահանաների տներում: Այնպես որ՝ Ձեր աշխատանքում մեկտեղված են տարբեր գրքեր: Ինձ ուրախացրեց նաև

այն, որ Դուք լույս սփռեցիք մարկիզ Պոզայի վրա: Եթե լուսավորեք այնպիսի մի գործչի, որը միշտ դիտարկվել է faux jour տակ (մռայլ լույսի ներքո), ապա այն կհայտնվի ձիշտ լույսի ներքո:

Ինձ երջանկացրեց Ձեր վստահ, խոսելու ավելի կատարյալ եղանակը, եթե հաշվի առնենք, որ ես նույնպես մոտենում եմ վաթսունին: Այս տարիքում մարդուն գրավում են ինչպես մտավախությունները, այնպես էլ հույսերը: Ինչ վերաբերում է աննշան սխալներին, ապա ես նկատեցի, որ 22-րդ էջում՝ 8-րդ տողի վրա [էջ 36, տող 15], «հետ» բառի փոխարեն, թերևս, պետք է «նկատմամբ» լիներ:

Երեկ ես թարգմանեցի Ռիվարոլի վերջին մաքսիմը և դրանով ավարտեցի աշխատանքը, ավելի ձիշտ՝ հաճույքը, որը ժամանակ առ ժամանակ զբաղեցնում էր ինձ 1945 թվականից: Ես կցանկանայի նաև նախաբան գրել, և մտածում եմ՝ արդյոք այդ նախաբանը շնորհել միայն Ռիվարոլին, թե Ռիվարոլին և Բյորկին, կամ գուցե պետք է ընդհանրապես հակիրճ ակնարկ գրել 1789 թվականից ի վեր պահպանողական ջանքերի վերաբերյալ, այն է՝ անհուսալի պայքարի մասին, քանի որ բոլոր այս մեծ մտքերը թեև ձիշտ են խորհում, բայց ելնում են իշխանության հին պատկերացումից, ինչպես փոփոխված աշխարհում դասական ֆիզիկայի ներկայացուցիչները:

Արդյո՞ք ասել եմ Ձեզ, որ իմ՝ դեպի հարավ տեղափոխության ընթացքում կորցրել եմ Ձեր գրքերի և աշխատանքների մեծ մասը: Ես հետևում եմ հնահավաքների կատալոգներին, բայց հազվադեպ եմ ինչ-որ բանի հանդիպում: Բայց ես նախ պետք է մատենագիտություն ձեռք բերեմ:

*Լավագույն մաղթանքներս*

*Ամանորյա փոնների կապակցությամբ*

*Ձեր Էռնստ Յունգեր*



(14 b) Վիլֆրիդեն Ռիդլինգենի վրա 18.12.54.

**Թանկագին Կարլ Շմիթ,**

Այսօրվա նամակի հետ կապված ես նայեցի իմ գրքերը և տեսա, որ ունեմ մատենագիտություն, ինչպես նաև «Ուրվագծերը», «Քաղաքական ռոմանտիզմ», «Սահմանադրության տեսություն», «Քաղաքականի հասկացություն», «Իրավունք և տարածություն», «Ֆրանսիական ոգու ձևավորումը», «Եվրոպական իրավագիտության դրույթունը», «Լևիաթան», «Դոնոսո Կորտես»: Այնպես որ՝ Ձեր գրքերից դեռ շատերն ինձ մոտ մնացել են: Հատկապես «Ուրվագծերը» ամեն ոք չէ, որ կարող է ներկայացնել\*:

*Ձեր Էռնստ Յունգեր*

\* Այս արդիափայտությունն ունի երկակի նշանակություն:

(14 b) Վիլֆրիդեն Ռիդլինգենի վրա 18.12.54.

**Թանկագին Կարլ Շմիթ,**

Շտարգարդոտի աճուրդի ինքնագրերի գրացուցակից: Համակցություն, որը, ամենայն հավանականությամբ, Ձեզ կհետաքրքրի: Ենթադրում եմ, որ խոսակցությունը տեղի է ունեցել 1848 թվականին:

*Ձեր Էռնստ Յունգեր*

## ԿԱՐԼ ՇՄԻՔԸ ԷՌԵՍՏ ՅՈՒՆԳԵՐԻՆ

Պլետենբերգ, 23 Հունվարի, 1955 թվական

### Թանկագին Էռնստ Յունգեր,

Ես կցանկանայի նաև տեսնել, թե ինչպես մի օր կկարողանամ Ձեզ և Ձեր տիկնոջը իմ անձնական մագնիտոֆոնային ժապավենով «Ձրույց իշխանության շուրջ»-ն ունկնդրելու հնարավորություն տալ, որի մասին Դուք ինձ այդքան բովանդակալից նամակ եք գրել: Դա զրույց է Անիմայի (Կարլ Շմիթի դուստրը, 1931-1983թթ. – թարգմանչի նշում) և իմ միջև. հարևանը, ով մագնիտոֆոն ունի, ճայնագրեց այն և հուլիսին ցուցադրեց իմ ծննդյան օրվա առթիվ: Այս առումով ես զղջում եմ, որ կնոջս կողմից ոչ մի նման ժապավեն չունեմ: Սա լավագույն հիշողությունն է. ճայնագրված արտահայտությունները ոչ թե ինչ-որ դատարկախոսություն են, այլ լավ մտածված հայտարարություն: Այս ձևով ես կարող էի նաև պատկերացնել իսկական կտակը: Բայց դրա համար պետք է ժամանակ հատկացնել և սպասել ծիշտ պահի:

Ձեր «Ավագե ժամացույցի գրքի» մասին ես բավականին ողորմելի քննարկում եմ լսել NWDR-ով (Հյուսիսարևմտյան գերմանական ռադիո)՝ դատական նիստի տեսքով: Վերջինս ամենից շատը զայրացրեց ինձ, քանի որ ամեն ինչ այնքան անաշխույժ էր, որ նույնիսկ մեղադրանքի և պաշտպանության ձևը որևէ լարվածություն արդյունքում չառաջացրեց: Որտեղից է ուշ սերունդների այս անաշխուժությունը: Գուցե դա այսպես է.

Հիմա գերմանացին ժամանակ չունի, հիմա նա ստիպված է կարդալ Կաֆկային:

Նա փորձում է և պատրաստ է վերականգնվել Կաֆկայի օգնությամբ:

Ռիվարոլի Ձեր հրապարակմանը և հատկապես դրա նախաբանին ես անհամբերությամբ եմ սպասում: Այն, ինչ Դուք ասում եք այս պահպանողականների մասին, ծիշտ է: Ես նույնպես այլևս չեմ կարողանում կարդալ դե Մեստրին: Ավելի ծիշտ՝ դեռ Բոնալդին, բայց միայն նրա

ծանոթագրությունները, ոչ այն, ինչ նա համարում է «համակարգ»: Նա նույնպես վերագաղթյալ է:

Շատ շնորհակալ եմ ժիոնոյի «Notes sur un Machiavel»-ի համար: Դա ընթերցանության համար հաճույք է: Բայց, հավանաբար, ես ինքս չափից շատ եմ մնում bouc émissaire-ի (քավության նոխագի), Ազազելի (հավելված 1) կարգավիճակում, քան եթե այդ հաճույքը կարողանար հմայել ինձ: Ես նաև շատ շնորհակալ եմ Ձեզ, որ մատնանշեցիք Բետտինայի և Բրունո Բաուերի միջև խոսակցությունը: Դուք դեռ ունե՞ք Բրունո Բաուերի «Ֆիլոն, Շտրաուս, Ռենան և առաջնային քրիստոնեություն» գիրքը, որը ես ժամանակին տվել էի Ձեզ: Ես կորցրել եմ իմ օրինակը: Ֆիլոնը հանկարծ իմ ուշադրության կենտրոնում հայտնվեց՝ «նոմոսի» իմ ուսումնասիրության հետ կապված: Նա պնդում էր, և բոլորը կրկնում էին նրա հետևից, նաև Պասկալը, որ «Nomos» բառը չի հանդիպում Հոմերոսի մոտ. համարձակ հայտարարություն, որը հերքեց արդեն Վոլտերը (հավելված 2), չնայած, ցավոք, դա չօգնեց:

Իմ գրադարանի մի մասը, որն ամերիկացիները բռնագրավել էին 1945 թվականին և 1952-ին վերադարձրել, ես 1954 թվականի դեկտեմբերին վաճառեցի Ֆրանկֆուրտի «Կերստ» հնավաճառի խանութին: Ցավալի է, բայց ես, ի վերջո, այլ կերպ չէի կարող դասավորել: Վերջապես, բնական է նաև այն, որ գրքերի ճակատագրերը հետևում են մարդկանց ճակատագրերին: Այժմ վաճառված այս օրինակներն ունեն պատմական կուրյոզի որոշակի արժեք, քանի որ բոլոր նրանց վրա կա «Legal Division U.S. Group, CC Germany Library, Prof. Carl Schmitt-Library» հրաշալի կնիքը և սպիտակ տուշով նկարված հիանալի S տառը համարանիշով: Ափսոս, որ ես չմտածեցի մեկ օրինակ պահել Ձեզ համար: Բայց եթե ես կարողանամ գտնել համապատասխան օրինակ, ես այն Ձեզ համար ձեռք կբերեմ:

Դուք հարցնում եք իմ գրքերի մասին, որոնք չունեք: Կոնկրետ ո՞ր գրքերը նկատի ունեք: Ենթադրում եմ, որ Դուք ունեք «Կարլ Շմիթի մատենագիտության փորձը»՝ կազմված 1953 թվականին Պ. Թոմմիսսենի կողմից: Ինձ ուրախություն կպատճառեր նվիրել Ձեզ այն ամենը, ինչ հետաքրքրում է:

Ինչ-որ չնչին բան ես կցում եմ այստեղ (հավելված 3):

Մի մոռացեք, թանկագին էռնսոտ Յունգեր, որ մի անգամ Դուք ինձ «վաթսունամյայի երգ»-ի հակատան...

- այստեղ ես դադար տվեցի երեկ՝ կիրակի, օրվա երկրորդ կեսին: Այսօր՝ հունվարի 24-ին, ես գրում եմ այս նամակի ավարտը: Այս ամսաթիվը Ձեզ հետ հանդիպումների և խոսակցությունների բազմաթիվ հիշողություններ է առաջացնում: Այս պահին ես մտածում եմ 1934 թվականի հունվարի 24-ի մասին՝ այն օրվա, երբ ես հանդես եկա իմ «Պետական համակարգը և Երկրորդ կայսրության փլուզումը, բուրժուայի հաղթանակը զինվորի նկատմամբ» գեկույցով: Այն ժամանակ ես շատ էի լինում Օտտոյի և Մարեքսի հետ: Այժմ Մարեքսին ամենաանպատշաճ կերպով փնտվել են Ջոն Ուիլեր-Բեննետի «Իշխանության Նեմեզիդա» գրքում (գերմանական հրատարակությունը՝ Բարոն ֆոն Դեմ Բուսշեի նախաբանով): Թունավոր սերմը չի վերջանում: Կցում եմ նաև մեկ նկար: Գուշակեք՝ ով է:

Ամենաջերմ բարևները և ամենալավ բարեմաղթանքները Ձեզ, թանկագին էռնսոտ Յունգեր, Ձեր հարգարժան տիկնոջը և Կարլ Ալեքսանդրին

*Ձեր Կարլ Շմիթից:*

«Ջրույց իշխանության շուրջ» գրքի մի քանի օրինակների վրա ես որպես ընծայում գրել եմ. էռնսոտ Յունգերն ասում է՝ Ռոբեսպիերները մտնում են իշխանություն՝ կարծես վանդակ մտնեն: Ես հարցնում եմ՝ ինչու միայն Ռոբեսպիերները: Բոլորը՝ չար և բարի, մտնում են իշխանություն՝ կարծես վանդակ մտնեն: Նաև վերևում 398-րդ էջի հատվածը (Աբել Բոննարի մասին) հարմար է նախաբանի համար:

## ԷՌԵՍՏ ՅՈՒՆԳԵՐԸ ԿԱՐԼ ՇՄԻԹԻՆ

Կաննշտադտ, 2.2.55.

### Թանկագին Կարլ Շմիթ,

Ձեր նամակին ես պատասխանում եմ այս մեկով՝ դեռևս միայն նախնական հաստատմամբ: Ես Կաննշտադտում եմ լողալու և հանքային ջրեր ընդունելու համար:

Մենք երկար ուսումնասիրում էինք Ձեր նկարը: Կինս նրան տվեց բարենպաստ մեկնաբանություն, իսկ ես՝ հակառակը: Ինձ համար սա առանց գլխի, գորտի ոտքերով արարած է:

Սակայն քավության նոխազները լավն են: Յուրաքանչյուրին մեկական: Երկուսս էլ կարող ենք պարծենալ նրանով, որ շատ հարմար քավության նոխազ ենք: Միայն նրանից, որ ես եմ հորինել Առաջին համաշխարհային պատերազմը, ես պետք է հրաժարվեմ, չէ՛ որ ես այն ժառանգել եմ հորիցս: Եվ երբ հետագայում ես այդքան ձշտորեն չարաշահում էի նրա տաղանդները, նա այլևս չէր ցանկանում նման հնարավորություն թույլ տալ: Դա ազգային-լիբերալ սերնդի Յանուսի գլուխն է:

*Ձեր է. Յու.*

## ԳԵՐԴ ԳԻՍԼԵՐԻ ՎԵՐՋԱԲԱՆԸ

*(հրապարակվում է կրճար փարբերակով, առանց մեկնաբանությունների)*

Իր երկար կյանքի ընթացքում Կարլ Շմիթը ուսումնասիրել, իրականացրել և ձանաչել է իշխանությունը: Նա այս խորը թեմայով սկսել է զբաղվել իր «Պետության արժեքը և անհատի կարևորությունը» դոկտորական դիսերտացիայում, որում նա բխում է իրավունքի իշխանական հիմքից, բայց նաև այն փաստից, որ իշխանությունը ևս իրավունքի կարիք ունի՝ որպես անհրաժեշտ նախապայման, որպեսզի հաստատի քաղաքական կարգը որպես իրավակարգ: Իր վերջին՝ «Համաշխարհային օրինական հեղափոխություն: Քաղաքական հավելյալ արժեքը որպես օրինականության և գերօրինականության վարձատրում» հրապարակման մեջ Կարլ Շմիթը մեկ անգամ ևս վերադառնում է իր դիպուկ ձևակերպումներից մեկին՝ իշխանության՝ պետական-իրավական տիրապետման անխուսափելի պարզևատրմանը: Այնպես որ, այսօր ևս համաշխարհային հեղափոխություններին, քանի որ նրանք ստիպված են արդյունաբերականացված հասարակություններում պետական իշխանություն ձեռք բերելու համար օրինական ընթանալ, կարելի է խոչընդոտել այն դրությամբ, որն օրինական ուժ է տալիս հարձակման ենթարկված խմբերին: Իրավագետի իր մասնագիտության, կյանքի փուլերի և քաղաքական ու գիտական գործունեության, ինչպես նաև երևույթներին որպես այդպիսին մոտենալու և «նյութից ելնելով մտածելու» ու նոր միայն դրանց սահմանումներ տալու ինտելեկտուալ կարողության շնորհիվ Կարլ Շմիթը նկարագրեց իշխանության և իշխանության իրականացման խնդիրներն ապելի հաջող և ձգձգիտ, քան մեկ ուրիշը քսաներորդ դարում:

1915-1919 թվականներին Բավարիայի առաջին բանակային կորպուսի շտաբի պետի տեղակալի զինվորական ծառայության ընթացքում Կարլ Շմիթը 6-րդ վարչությունում պատասխանատու էր խաղաղասիրական շարժման, տպագիր նյութերի ներմուծման, արտահանման, առգրավման և այլնի վերահսկողության համար: Զինվորական նախարարությունում գրաքննության բաժնի հետ

սերտ կապերն արտացոլվել են հայտնի խաղաղասեր գրողների դեմ օպերատիվ գործողություններում: Ելնելով ռազմական մեծ հաստատությունում իր ունեցած փորձից, որի գլխավոր հրամանատարը տիրապետում էր գործադիր իշխանությանը՝ 1916 թվականին Ստրասբուրգում դոցենտի կոչում ստանալու իր փորձնական դասախոսության համար Շմիթն ընտրեց քրեական-դատավարական ընթացակարգի վրա ռազմական դրության ազդեցության թեման՝ իշխանության հարցի բարձրացման և ռազմական հրամանատարների իշխանության սահմանափակումների մասին:

Կարլ Շմիթը վերապրել է Բավարիայի միապետության հանկարծակի փլուզումը և 1919 թվականին Խորհրդային հանրապետության հետևորդների և Ռայխսվերի միջև քաղաքացիական պատերազմը իր պաշտոնում և, ի վերջո, Մյունխենի քաղաքային պարետատան գրասենյակում տեղի ունեցած իրադարձությունների կիզակետում: Հոկտեմբերյան հեղափոխությունը Ռուսաստանում ոչ պակաս տպավորություն թողեց նրա վրա: Կրոնական պատերազմների ժամանակներից ի վեր ինքնիշխանության հասկացության գաղափարների պատմության վերաբերյալ նրա ուսումնասիրությունը այդ փորձի հետ մեկտեղ հանգեցրեց Կարլ Շմիթի «Դիկտատուրա: Ինքնիշխանության ժամանակակից գաղափարի ակունքներից մինչև պրոլետարական դասակարգային պայքար» առաջին համակարգված աշխատությանը, որում արդեն իսկ դիտարկվում էր ժողովրդի հիմնադիր ուժից բխող արտակարգ դրության և իշխանության, pouvoir Constituant, մեծ թեման:

Վեյմարյան հանրապետությունում Կարլ Շմիթը հայտնի դարձավ ռեյխնախագահի իրավասությունների մեկնաբանությամբ, ով ձգնաժամի ժամանակ այսպես կոչված բռնապետական լիազորությունների օգնությամբ, Վեյմարյան կայսերական սահմանադրության 48-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն, կարող էր օրենքի ուժ ունեցող արտահերթ որոշումներ արձակել առանց խորհրդարանի մասնակցության: Կարլ Շմիթը անմիջականորեն քաղաքական իշխանության կենտրոնին մոտեցավ, երբ 1932 թվականի սեպտեմբերին ռեյխկանցլերի

շրջապատում մշակեց արտակարգ դրության պլան, որը պետք է կանխեր Հիտլերի իշխանության գալը: Ըստ այս ծրագրի՝ կառավարությունը անգործունակ Ռայխստագի վտարման դեպքում պետք է գործեր Վեյմարյան սահմանադրության 48-րդ հոդվածի հիման վրա:

Քսանականների վերջերից սկսած՝ Կարլ Շմիթը մատնացույց էր անում տեխնիկայի զարգացման շնորհիվ ուժեղացած պետական իշխանության պահպանման միջոցները՝ կապված գեների, տրանսպորտի և կապի հետ: Ձանգվածային ժողովրդավարության մեջ նրա համար որոշիչ, կամքի ձևավորման և համաձայնության կազմավորման համար անհրաժեշտ ժամանակակից պետության իշխանական գործիք էր համարվում, առաջին հերթին, ժողովրդի հասարակական կարծիքի վրա ազդելու մեթոդներին տիրապետումը: Նա նաև դրանց շարքին է դասում տնտեսության վրա ազդեցությունը, ազգային եկամտի ձևավորումն ու բաշխումը և դրա հետ կապված գործող տնտեսական գործընթացի պլանավորումը: Քաղաքական իշխանությունը, այսպես է ամփոփում Կարլ Շմիթը 1933 թվականի սկզբին, անհրաժեշտ նախադրյալ է արդյունավետ տնտեսական ծրագրի համար, և ոչ հակառակը, ծրագիրը հիմնավորում է կառավարումը:

Ադոլֆ Հիտլերի՝ ռեյխկանցլերի պաշտոնում նշանակվելուց և արտակարգ լիազորությունների տրամադրման մասին օրենքի ընդունումից հետո Կարլ Շմիթը պատրաստ էր համագործակցել նոր կառավարությունում՝ իշխանության միջավայրում գործելու համար. նա ձևակերպեց կայսերական կառավարիչների մասին օրենքը, ինչը նշանակում էր հողերի ինքնիշխանության ավարտ, ինչպես նաև համայնական կառուցվածքի մասին պրուսական օրենք: Երեք տարի նա քաղաքական ազդեցության հետ կապված նշանակալի պաշտոններ էր զբաղեցնում, օրինակ՝ պրուսական պետական խորհրդական, Ազգային-սոցիալիստական գերմանացի իրավաբանների միության բարձրագույն դպրոցի կայսերական բաժնի դասախոսների վարիչ, գերմանական իրավունքի ակադեմիայի անդամ և կարևոր ամսագրերի ու գրքերի շարքերի հրատարակիչ:

Այն բանից հետո, երբ ՍՍ-ն հեռացրեց նրան պաշտոններից,



Շմիթն զբաղվեց Թոմաս Հոբսի «Լևիաթան» աշխատանքով և նրա ռացիոնալ պետական իշխանության ծրագրով, որը հոգ է տանում պետության քաղաքացիների պաշտպանության և անվտանգության մասին: Պաշտպանության և հնազանդության հարաբերակցությունը Կարլ Շմիթի համար Հոբսի պետական կառույցի կենտրոնական գաղափարն էր. երբ պաշտպանությունը դադարում է, հնազանդությունը նույնպես վերանում է: Վտանգների այս քաղաքական հսկողությանը պետության կողմից սպառնում են potestas indirea (անուղղակի իշխանություն) ուժերը, որոնք ստվեր են գցում «պետական հրամանի և քաղաքական վտանգի, իշխանության և պատասխանատվության, պաշտպանության և հնազանդության միանշանակ համաձայնեցվածության վրա, բայց, չնայած միայն անուղղակի, բայց այդ պատճառով ամենևին ոչ պակաս ինտենսիվ անպատասխանատվությունից ելնելով, ունեն բոլոր արտոնությունները, չեն ենթարկվում քաղաքական ուժի ռիսկերին»:

## Զրույց ռադիոյով

Կարլ Շմիթն իր համալսարանական կարիերան ավարտելուց և ծամբարում գերությունից ու Նյուրնբերգում որպես վկա ձերբակալությունից ազատվելուց հետո 1947 թվականից բնակվում էր իր հայրենի քաղաք Պլենտենբերգում: Նա արագորեն փորձեց վերականգնել կամ վերահաստատել կապերը գիտնականների և լրագրողների հետ: Այդպես՝ 1951 թվականին նա կապվեց Հեսսենյան ռադիոյի հետ, որը հունիսի 19-ի երեկոյան հեռահաղորդեց նրա զրույցը պատմության փիլիսոփայության մասին Վալտեր Վարնախի հետ: Երբ այս ռադիոկայանը իր «Երեկոյան ստուդիա» ծրագրի համար հետաքրքիր թեմաներ էր փնտրում, նրա խմբագիր Հայնց Ֆրիդրիխը Ալֆրեդ Անդերշի օգնությամբ դուրս եկավ Կարլ Շմիթի վրա: Նրանց խոսակցություններից առաջարկ ծագեց քննարկելու իշխանության թեման երկխոսության մեջ ժամանակակիցներից մեկի հետ հակառակորդի դերում:

Դեռ 1947 թվականին Կարլ Շմիթը Նյուրնբերգի դատական բանտում որպես վկա հարցաքննությունների ընթացքում գրավոր պատասխանել է քննիչ Ռոբերտ Քեմպների հարցին «կայսերական նախարարի և կայսերական գրասենյակի ղեկավարի կարգավիճակի վերաբերյալ՝ պետաիրավական ծանոթագրություններով» ու նաև մանրամասն նկարագրել է «Հիտլերի ձեռքբերում իշխանության ծայրահեղության հասցրած միավորումը» և տիրակալի հասանելիության խնդիրը: Ինքը Կարլ Շմիթը ռադիոյով զրույցը, ինչպես նաև գրքի ավելի ուշ տարբերակը ներկայացնում էր որպես իր՝ Նյուրնբերգի ժամանակների մտքերի շարունակություն, որոնք, իրենց հերթին, հիմնված էին նախորդ տասնամյակի վերապրումների և փորձի, այլ ոչ վերջին հերթին 1945-1947թթ. իր կալանքի տարիների սեփական անզրույցության վրա:

Նախ որպես հարմար զրուցակից հրավիրվեց ֆրանսիացի քաղաքագետ Ռայմոն Արոնը. Մոսկվա ուղևորության պատճառով նրա մերժումից հետո հերթով դիմել էին սոցիոլոգ Հելմուտ Շելսկուն և փիլիսոփա Առնոլդ Հելենին: Երբ այս նամակագրությունը չհանգեցրեց կոնկրետ պայմանավորվածությունների, Կարլ Շմիթն առաջարկեց անձամբ գրել ձեռագիրը, որում թեման պետք է քննարկվեր

երկխոսության տեսքով: Ֆրիդրիխը համաձայնեց առաջարկին և 1954 թվականի մայիսի 31-ին նամակով առավել ծշգրիտ ձևով ներկայացրեց բոլոր պայմանները (հաղորդման տևողությունը՝ մեկ ժամ, ձեռագրի չափը՝ 2224 տպագիր նիշ 1½ տողի միջակայքով, նյութը հանձնել մեկ շաբաթից): Հունիսի 8-ին Կարլ Շմիթը ուղարկում է ձեռագիրը նշումով՝ «Զրույցը հանելուկ-խնդրի լուծման է նման այն իմաստով, որ խոսքը նրանում բարոյական և դիալեկտիկ մտածողության հակասության մասին է: Խոսակցության X մասնակիցը կանգնած է բարոյական տեսակետի վրա, որը միշտ անմիջապես գնահատում է՝ սկզբից դիտարկելու փոխարեն... Մեկ ժամ տևողությամբ հանրային զրույցը այնպիսի յուրօրինակ և նշանակալի մտածողի հետ, ինչպիսին Հելենն է, միշտ ռիսկային ձեռնարկում է: Այն, որ այս դեպքում երկու գործընկերները մեկ ժամվա ընթացքում կսկսեն իրական և միևնույն ժամանակ երրորդ կողմի համար անմիջապես հասկանալի զրույց, հասարակ բախտի հարց է: Ես առանձնահատուկ հույսեր ունեի Շիելսկու հետ կապված, քանի որ նա Հոբսի հիանալի գիտակ է, և կարելի էր փորձել զրույցը խմբավորել Հոբսի գաղափարների և ձևակերպումների շուրջ: Բայց սա էլ, թերևս, չափազանց գիտական և մասնագիտացված քննարկում կլիներ: Ուստի ես Ձեր բարեհաճությանն եմ առաջարկում կցված պարոն X-ին»:

Զրույցը հեռահաղորդեցին 1954 թվականի հունիսի 22-ին՝ «Ուժի սկզբունքներ» խորագրով: Հունիսի 23-ին Կարլ Շմիդտը գրավոր շնորհակալություն հայտնեց Հեսսենյան ռադիոյին՝ նամակ ուղարկելով «Մշակութային խոսք» ծրագրի երեկոյան խմբագրությանը. «Կապը Ֆրանկֆուրտից այստեղ՝ Զաուերլանդ, հաճախ անհարթ է, այնուամենայնիվ, երեկվա հաղորդումը բավականին հասկանալի էր: Ես կցանկանալի ինչպես ռեժիսորին, այնպես էլ հաղորդավարներին հայտնել իմ անկեղծ շնորհակալությունը զրույցի հիանալի փոխանցման և մեկնաբանման համար: Ինչպես ընդհանուրի, այնպես էլ բոլոր կարևոր մանրուքների իմաստն ու միտքը Ձեր կողմից կատարյալ հասկացվել էին: Որոշ տեղերում ինձ գերում էին զեկույցի ուժն ու հավաստիությունը»: 1954 թվականի նոյեմբերի 22-ին այս հաղորդումը կրկնել են հյուսիսարևմտյան գերմանական ռադիոյի առաջին ծրագրում ժամը 22:10-ին՝ «Իշխանությունը վտանգավոր

է՝ ինչպես միշտ, գաղտնապահ՝ ինչպես երբեք: Պետական իրավունքի մասնագետ Կարլ Շմիթը իշխանության սկզբունքների վերաբերյալ» խորագրով:

Ռեզոնանսը լրիվ դրական էր. այսպես՝ հրապարակման խմբագիր և գրականության և ռադիոյի փորձառու մասնագետ Ֆրիդրիխ Բենյան ասաց, որ զրույցը՝ որպես «ռադիոյով հանելուկի լուծում, գրեթե կատարյալ էր»: Անիմա Շմիթը՝ Կարլ Շմիթի միակ զավակը, ով այդ ժամանակ սովորում էր Հեյդելբերգում, 1954 թվականի հունիսի 24-ին շատ պատկերավոր գրում է իր հորը. «Սիրելի հայրիկ, երեքշաբթի երեկոյան ես Ֆորստխոֆֆի մոտ համընդհանուր և օրինակելի պրոպագանդայից հետո, որը հեյդելբերգյան դասախոսների և գարեջրատների տիրուհիների ռադիոյի հետ ունեցած տեխնիկական և, ցավոք, ամենևին ոչ կատարյալ հարաբերությունների պատճառով արժանի ազդեցություն չունեցավ, լսում էի իշխանության շուրջ զրույցը: Խոսակցությանը որոշ չափով վնասեց ամպրոպի մոտիկ լինելը, բայց այն բավականին հասկանալի էր, և երկու հաղորդավարներն էլ լավ, իմաստալից և ճիշտ տեմպերով էին խոսում: Ջնջվել են միայն մի քանի ծիծաղելի հնարքներ՝ հեգնանքի և սրամտության տխուր բացակայության պատճառով»: Հաղորդման կրկնության վերաբերյալ Ֆորստհոֆֆը գրում է նոյեմբերի 2-ի նամակում. «Երկխոսությունը նորից ու նորից ոգեշնչում է ինձ: Այս դարում նա կարժանանա նույն իմաստին, ինչին Ռանկեի «Քաղաքական զրույցը» անցյալ դարում և ընդհուպ մինչև Վեյմարի ժամանակները»:

Էռնստ Յունգերին ուղղված նամակներից մեկում Կարլ Շմիթը արտահայտվել է զրույցի ձայնագրությունների իսկության մասին՝ տեխնիկական պահման միջոցների օգնությամբ:

## Գրքային տարբերակը

Հրատարակիչ Գյունտեր Նեսկեն, ում հետ Կարլ Շմիթը ծանոթացել էր Էռնստ Յունգերի շնորհիվ, ռադիոհաղորդումից շատ չանցած հետաքրքրվեց ձեռագրով: Նույնիսկ եթե հեղինակն սկզբում տատանվում էր, ապա 1954 թվականի հունիսի 25-ի նամակում նա գրում է. «Ես դեռ որոշում չեմ կայացրել, նույնիսկ եթե ինձ գրավում է հնարավորությունը փչացնելու թեմայի այնպիսի մեծ գիտակաների կոնցեպցիան, ինչպիսիք են Գվարդինին, Ռայնհոլդ Շնայդերը, ինչպես նաև Բերտրան դը ժուվենելը և Գ. Ֆեռերոն»: հեղինակը և հրատարակիչը շատ արագ համաձայնության եկան հուլիսի սկզբին: Հունիսի վերջին Կարլ Շմիթը ձեռագիրն արդեն ուղարկել էր: Հրատարակիչը շնորհակալություն հայտնեց հեղինակին հուլիսի 3-ին և անմիջապես առաջարկներ ներկայացրեց ձևավորման վերաբերյալ: Հուլիսի 8-ին հեղինակը առաջարկեց ստեղծագործության այլընտրանքային վերնագրեր, զրուցակիցների նշանակումներ և էպիգրաֆ: Հրատարակչության հետ պայմանագիր ստորագրվեց հուլիսի 24-ին, և 1954 թվականի հոկտեմբերին գրքի տոնավաճառի սկզբին այս փոքրիկ ստեղծագործությունը տպագրվեց և մեծ հետաքրքրություն առաջացրեց:

Կարլ Շմիթը կրկին հաղորդեց այս մասին նամակում. «Ֆրանկֆուրտում գրքի տոնավաճառում համբուրգյան «Դի Ցայտ» թերթի ֆելիետոնների խմբագիր, ինձ անձամբ անձանոթ դոկտոր Պաուլ Գյուններֆելդը հայտնվեց անմեղ Նեսկեի ցուցասեղանի մոտ և սպառնաց կոտրել այն, քանի որ այնտեղ ցուցադրված էր Կ.Շ.-ի նորույթը՝ հենց այս «Իշխանության շուրջ զրույցը»: Ֆրանկֆուրտի հայտնի գրավաճառներից մեկը պատմեց ինձ այս տեսարանի մասին, երբ ես անցյալ շաբաթ Ֆրանկֆուրտում էի»:

Մեկ այլ վիճաբանություն էլ բռնկվել էր շվեյցարական «Դի Տառ» օրաթերթում, որում հայտնվել էր արտասահմանյան խմբագիր Հանս Ֆլեյգի «պանեգիրիկ» (հենց Կարլ Շմիթի արտահայտությունը) գրախոսությունը, ով վաղուց էր ծանաչում Կարլ Շմիթին: Դրա համար խմբագրին դաժանորեն դատաբանել էր գրական պատմաբան Մաքս Ռիխները: Այս համատեքստում տեղավորվում էր նաև այն,

որ նույնիսկ Հյուսիսարևմտյան գերմանական ռադիոյով «Իշխանության շուրջ զրույցի» ծրագրի նախաբանին լրագրող և արվեստաբան Կարլ Լինֆերտը կցեց այնպիսի ներողամտական նախազգուշացումներ, որ, ինչպես գրել է Կարլ Շմիթը, ունկնդիրներին թվում էր, թե «հիմա կհետևի մի բան, որը Աստված է արգելել»:

Գրախոսությունները շատ դեպքերում դրական էին, օրինակ՝ պետական իրավունքի մասնագետ Ուլրիխ Շեյները տվել է հետևյալ գնահատականը. «Ինձ թվում է՝ սա ամենաուժեղն է, ինչ հեղինակը ներկայացրել է «Քաղաքականի հասկացությունից հետո»:

Էբերգարտ ֆոն Ֆիշը համարում էր, որ Շմիթը իր փոքրիկ գրքում ընդգրկել է իշխանության խնդիրը, ըստ էության, ավելի սուր և ճշգրիտ, քան միջազգային իրավունքի անգլիացի գիտակ Ջորջ Շվարցենբերգերը, որի մոնումենտալ աշխատանքը հենց նոր էր հայտնվել գերմաներեն թարգմանությամբ:

Կարլ Շմիթը արձագանք ստացավ նաև իր նամակագրական որոշ գործընկերներից: Այսպես՝ Էռնստ Յունգերը 1954 թվականի դեկտեմբերի 17-ին գրեց, որ իրեն հատկապես դուր է եկել «Իշխանության բարձրացումը կամ մինչև անանուն մակարդակ տրանսֆորմացիան: Այս կետից երկու հավանական եզրակացություն է բխում. առաջինը, որն առաջ է քաշվում ինքնաբերաբար, այն մասին է, որ իշխանությունն սկսեցին չարիք կոչել հենց այն պահից, երբ այն սկսեցին դիտարկել որպես մարդկանց միջև հարաբերություն, և երկրորդը՝ արդյոք անհրաժեշտ չէ, այնուամենայնիվ, անվանել այս անանուն մեծությունը համապարփակ պատկեր ունեցող, և որ հենց դա է հնարավոր և օգտակար լուծումներից մեկը»:

Լրագրող Մարգրեթ Բովերին 1954 թվականի հոկտեմբերի 21-ին գրում էր. «Այժմ հայտնվել է Ձեր «Զրույց իշխանության շուրջ»-ը, և ես անմիջապես կարդացի այն մեկ շնչով ... Ամենահետաքրքիրն այն եմ գտնում, որ Դուք խոսում եք իշխանության նախասրահի մասին: Ես դրա շատ օրինակներ եմ հավաքել, դրանք սկսվում են Ռուզվելտի քաղաքականության վրա այսպես կոչված «kitchen cabi-

net»-ի ազդեցությունից և ավարտվում Բամբերգի շրջանային կառավարության ծառայողական աշխատասենյակներով... Ես չեմ կարող համաձայնել Ձեր գրույցի մի կետի հետ. Դուք ինքներդ Ձեզ ասում եք, որ իշխանություն չունեք: Բայց նա, ով մտածում է այնպես, ինչպես Դուք, և կարող է Ձեզ նման ձևակերպել մտքերը բառերով, նա, այնուամենայնիվ, հզոր է: Ինձ թվում է՝ սա իշխանության այն ձևն է, որի մասին Դուք չխոսեցիք»:

Նաև Նիկոլաուս Ջոմբարտը 1954 թվականի օգոստոսի 10-ի իր նամակում մանրամասն ուսումնասիրել է «Իշխանության շուրջ գրույցը» և մատնանշել խնդիրը. «Ո՞վ ընդհանրապես իրավունք ունի խոսելու իշխանության մասին: Դուք ուզում եք ունկնդրին ստիպել հավատալ, որ սա հռետորական հարց է, բայց դա ամենևին այդպես չէ, չնայած Դուք, ինչպես որ պատասխանում եք այս հարցին, կարծես թե այն սխալ եք ձևակերպել: Չէ որ այս հարցի հետևում կանգնած է իշխանության մասին ամբողջ փիլիսոփայության ամենաբարդ խնդիրը, մասնավորապես այն իմաստով, որ նա, ով իշխանություն ունի, ըստ ձևակերպման չի խոսում այդ մասին»:

Ռեյխկանցլեր Հենրիխ Բրյունինգը 1955 թվականի մարտի 5-ին գրել է Կարլ Շմիթին. «Մեծարգո պարոն գործընկեր: Անչափ շնորհակալ եմ Ձեր ուղարկած «Իշխանության և տիրակալի հասանելիության մասին» չափազանց հետաքրքիր և խելացի ուսումնասիրության համար: Ես այն մեծ հետաքրքրությամբ կարդացի: Վերջին խնդիրը քաղաքականության մեջ ամենաբարդ և անլուծելիներից մեկն է, եթե բացակայում են հաստատուն ավանդույթները, որոնք հիմնված են բազմաթիվ սերունդների փորձի վրա»:

«Իշխանության շուրջ գրույցի» լույս տեսնելուց վեց ամիս անց Կարլ Շմիթը 1955 թվականի ապրիլի 13-ին «Դեր Շպիգել» ամսագրի հրատարակիչ Ռուդոլֆ Աուզտենյին ուղղված նամակում Աուզտենյի՝ 1954 թվականի սեպտեմբերի 24-ին հեղինակին ուղղված շնորհակալական նամակի դիտարկման հետ կապված, համաձայն որի՝ իբր Շմիթի գիրքը ընթերցողների լայն շրջանակի համար մի քիչ «բարձր» էր, այսպես է գրում. «Ես դեռ որոշակի ափսոսանք եմ զգում այն բանի համար, որ Դուք իմ «Իշխանության և տիրակալի

հասանելիության շուրջ գրույցում» չգիտակցեցիք դրա սատանայական արդիականությունը: Որտեղ ուղղակիորեն տիրում են օկուպացիոն ուժերը, այնտեղ տիրակալի և նրա նախասրահների հասանելիությունը արկածախնդրություն են դառնում, ինչպես կարող ենք կարդալ Քոններսոյթի մասին Ձեր հոդվածում: Գոյություն ունի հսկայական գրականություն «իշխանության» մասին՝ փիլիսոփայական, աստվածաբանական, պատմական, սոցիոլոգիական և այլն: Բայց դեռևս ոչ ոք չի գտել այս պարզ բանալին՝ տիրակալի հասանելիության խնդիրը: Եվ Դուք ինձ գրում եք, որ ավելի լայն շերտերը չեն հասկացել դա: Դա հասկանում է ցանկացած սղագրուիի և ցանկացած դոնապան: N.B.: Եվ «ուղղակի զեկույցի իրավունքը» այժմ պետք է ամրագրվի նույնիսկ պաշտպանության մասին օրենքում: Արդյոք գոյություն ունի նաև միջնորդավորված զեկույցի իրավունք: Վերնախավի հասանելիության հրաշալի խնդիրներ: Եվ Դուք համարում եք «իշխանության շուրջ գրույցը» ոչ արդիական: Ներեցեք ամենագետ, բայց առարկություններ հանդուրժող ծերունուս այս հետգրությունը»:



## «Դի Ցայթ» թերթի հետ սկանդալը

«Դի Ցայթ» շաբաթաթերթի՝ 1954 թվականի հուլիսի 29-ի համարում (9-րդ հրատարակման տարի, համար 30) հունիսի 22-ի ռադիոհաղորդմանը խմբագրական մատնանշմամբ տպագրվել է զրույցի մեծ մասը՝ «Իշխանության նախասրահ» խորագրի ներքո: Գլխավոր խմբագիր Ռիխարդ Տյունգելը ծրագրի ամփոփագրում տվել է հետևյալ գրառումները. «Պետական իրավունքի գերմանացի նշանավոր դասախոս Կարլ Շմիթը Դաշնային Հանրապետությունում վիճահարույց երևույթ է համարվում: Այնուամենայնիվ, նրա հակառակորդները պետք է լսեն, երբ նա ինչ-որ սրամիտ և անկրկնելի բան ուներ ասելու... Նա, ով ապագայում կցանկանա գրել իշխանության խնդրի մասին, չի կարող հաշվի չառնել Կարլ Շմիթի հողվածը»:

Այս հրապարակումը կոմսուլի Մարիոն ֆոն Դյոնհոֆին դրդեց 1954 թվականի օգոստոսին հեռանալ խմբագրությունից: Տյունգելին, ով ի սկզբանե լիցենզիայի սեփականատերն էր և թերթի սեփականատեր-համահիմնադիրը, 1955 թվականի վերջին ուղարկեցին արձակուրդ և նույնիսկ արգելեցին մուտք գործել խմբագրություն, երբ կոմսուլի Դյոնհոֆը գլխավորեց թերթի քաղաքական բաժինը:

## Էպիլոգ

Հակիրճ ներկայացնենք այս փոքրիկ աշխատանքի հետագա ծակատագիրը: Առաջին հրատարակության տպաքանակը կազմել է 3000 օրինակ, որից 2000 օրինակ ամբողջությամբ գրակազմված էր: Հրատարակիչն ի սկզբանե գոհ էր վաճառքից: 1954 թվականին վաճառվել էր 810 օրինակ, 1955-ին՝ 260 օրինակ, 1956-ից 1960-ը՝ 330, իսկ 1961-ից 1967-ը՝ 265 օրինակ; մնացած մասը՝ ներառյալ չգրակազմված և չկտրված 1000 թերթերը, 1969 թվականին տրվել են մակուլատուրայի:

Կարլ Շմիթը բազմիցս պնդել է, որ հրատարակչությունը վերադարձնի իրեն այս գրքի իրավունքները: Այն բանից հետո, երբ նա հասավ դրան, 1977 թվականին Ֆրանկֆուրտի գրքի տոնավաճառում այս վերջաբանի հեղինակը Կարլ Շմիթի հանձնարարականով բանակցություններ վարեց Գյունթեր Նեսկեի հետ նոր հրատարակության մասին, որը պետք է ներառեր նաև այլ «Չրոյցներ» և հոդվածներ, բայց այդ ծրագրերն այն ժամանակ չհաջողվեցին: Այնուհետև 1994 թվականին լույս տեսավ երկրորդ հրատարակությունը «Akademie» հրատարակչությունում՝ «Նոր կառավարության մասին զրոյցի» հետ միասին: Այս հրատարակությունն այն պահից ի վեր արդեն ամբողջովին վաճառվել է:

«Իշխանության շուրջ զրոյցը» թարգմանվել է մի քանի լեզուներով, այսօր կան դրա իսպաներեն, ֆրանսերեն, իտալերեն, հունգարերեն, ծապոներեն և կորեերեն գրքային տարբերակները: Իսպանական հրատարակությունը, որը թարգմանել էր Կարլ Շմիթի դուստրը՝ Անիմա Շմիթ դե Օտերոն, լույս է տեսել «Նոր կառավարության մասին զրոյցի» հետ «Carl Schmitt, Diálogos» գրքում, որի համար Կարլ Շմիթը 1961 թվականի օգոստոսին նախաբան է գրել:

«Այս զրոյցում ծեր, փորձառու մարդը անփորձ ուսանողի հետ քննարկում է իշխանության խնդիրը, մի խնդիր, որն էլ ավելի բարդ ու խորհրդավոր է դարձել իշխանության ժամանակակից միջոցների հսկայական ուժեղացման պատճառով: Ուսանողը քիչ թե շատ խելացի հարցեր է տալիս, և ծերունին պատասխանում է խելացի և զգուշավոր: Սա ամենևին Պլատոնի երկխոսություններից մեկի նման երկխոսություն չէ. Ուսանողը ժամանակակից Ալկիբիադը չէ, և ծերունին ամենևին էլ այժմյան Սոկրատեսը չէ: Նա

զգուշանում է մետաֆիզիկական շահարկումներից և սահմանափակվում է նրանով, որ զուտ նկարագրորեն ներկայացնում է ցանկացած իշխանության իմմանենտ դիալեկտիկան: Մեր զրոյցում բացակայում է նաև «սատանայական» բառը, որն այսօր այդքան հաճախ հանդիպում է իշխանության մասին բազմաթիվ գործերում»:

Klett-Cotta-ի հրատարակչությունում «Իշխանության շուրջ զրոյցի» նոր հրատարակչությունը Գյունթեր Նեսկեի հրատարակչությունում առաջին հրատարակչության տպագրման համար նախատեսված ձեռագիր տեքստի վրա է հիմնված: Կարլ Շմիթի գրավոր ժառանգության մեջ տեքստի ուղղումներ կամ լրացումներ չեն գտնվել:

Թարգմանության բնօրինակի աղբյուրը՝ Библиотека Велесова Слобода, Карл Шмидт | Беседа о власти и доступе к властителю {<https://velesova-sloboda.info/philosophy/schmitt-beseda-o-vlasti-i-dostupe-k-vlastitelyu.html>} (04.10.2020)

**«Ինչպե՞ս» հանրային հեղափոխությունների կենտրոն <4**  
© Բոլոր իրավունքները պաշտպանված են:



enlight  
dare to think

## «ԻՆԼԱՅԹ»

### ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Ինլայթ» հանրային հետազոտությունների կենտրոն հասարակական կազմակերպությունը հետազոտական-խորհրդատվական կենտրոն է, որն իրականացնում է հետազոտություններ, վերլուծություններ և խորհրդատվություններ քաղաքականության, տնտեսության, մշակույթի, կրթության, տեխնոլոգիական և այլ բնագավառներում:

«Ինլայթը» նաև ծավալում է կրթական, թարգմանչական, հրատարակչական, տեղեկատվական գործունեություն և կազմակերպում տարաբնույթ նախագծեր:

[enlightngo.org](http://enlightngo.org)

ISBN 978-9939-1-1103-2



9 789939 111032